քանտավետը դիմում ե արդեն առաջուց կազմած թղթակալի (պապկա) և անտառային հարց, բաժնի ոգնությանը, վորի մեջ պահպում են բոլոր անտառային հարցին վերաբերող քաղվածքները, կտրոնները (լրագրներից), անտառապետությունից և շրջգործկոմից ոտացված տեղեկություններ և այլն. Յերկրորդ դեպքում ստացվում ե լրագիրների այն համարներն վորտեղ շահող որլիզացիաների համարները հայտարարված են։ Այս բոլոր դեպքերում նարագորություն կա հարցմունքին պատասխանել անմիջականորեն ձեռքի տակ ունեցող մատերյալից, առանց հարցի լրացուցիչ ուսումնասիրությունների։

Ուրիշ դեպք բարդ և ակտիվ միջամտություն պահանջող զրադարան ե դիմում 60 տարեկան ծերուկ և հարցնում, թե ինչու յեն գաղարել իրեն թոշակ բաց թողնել։ Նրա հետ ունեցած զրույցից յերեվում ե, վոր նա ծառայել և Մոսկվայի գավառի գործարաններից մեկում և ծեր լինելու պատճառով սոցիալական ապահովագրության գրամարկություն թոշակ ե ստանալիս յեղել։ Ուրիշ գավառ փոխադրվելուց հետո թոշակ ստանալու համար նա սկզբում գնում եր գործարան ու այնտեղից ստանում իր թոշակը։

Գնացքի տոմսի գինը թանգանալուց հետո նա ցանկացակ շրջգործկոմի միջոցով թոշակը փոխադրել տալ իր նոր ընակատեղին և այդ մոմանտից յերկու տարի յեանցել, ինչ նա թոշակ չի ստանում։ Վորպեսզի ծերունուն ողնի, զրադարանը ստիպված պիտի լինի հետեւյալ միջոցներին դիմել։

1. Գործի պարզման համար դիմեց շրջգործկոմին, չկա արդյոք վորեվե հետք այդ գործի նկատմամբ, Բայց վորովհետեւ սոց. ապահովագրության գրամարկություն հանձնված եր գավառայիս կենտրոնին՝ պատասխանը բացասական յեղավ։

2. Տեղեկություններ ե հարցնում գավառային խոր-

հրդից, այնտեղ նույնպես այդ գործին վերաբերյալ փաստաթղթեր չեն գտնվում:

3. Վորեվե հետք գտնելու համար շտապ կերպով դիմուց սոց-ապահովագրության բաժնի նախկին վարիչին արդյոք այդ գործի մասին վորեվե բան չի իմանում: Պարզէց, վոր ծերունու փաստաթղթերն իր ժամանակին գործարանից ստացվել և ուղարկվել են սոց-ապահովագրության գավառային բաժինը:

4. Անհրաժեշտ յեղավ յերորդ անգամ դիմելու սոց-ապահովագրության դաշտային բաժնին, բայց նորից բացասական պատասխան:

5. Այս անգամ դիմում և սոց-ապահովագրության գավառային բաժնին և հարցնվում, ինչպես վարվել թոշակ ստանալը վերականգնելու համար:

6. Անկետա յե ստացվում և լցվում ծերունու կողմից:

7. Գործարանից ստացվում և ծերունու նախկին աշխատանքի ճշտյալ փաստաթուղթ:

8. Ծերունին գնում, ներկայանում և բժշկական վերահսկիչ հանձնաժողովին և վկայական ստանում: Յերկու ամսից հետո ծիրանին սկսում և թոշակ ստանալ:

Քաղլուսաշխատակցի կողմից մեծ հաստատակամություն և շատ անգամ սեղծագործական աշխատանք պահանջող վերը նկարագրվածի վորով տրվող տեղեկատուները գրադարանի առորյա աշխատանքների սիստեմայի մեջ չի կարելի մտցնել, իրենց բորդության պատճառով, բայց մասնավոր գետքերում գրադարանը ստիլված և լինելու այդպիսի աշխատանք տանել՝ չփախենալով մեծ եներգիայի ծախսումից: Այդ անհրաժեշտ և ամենից առաջ ազգաբնակչության կողմից ամուր ավարիտետ և վստահություն ձեռք բերելու համար:

Դրա դիմաց շատ տեղեկություններ կարելի յե տալ անմիջապես զրերի ոգնությամբ: Այս դեպքերում, յեր

աշխային գրադարանն ինքը չի կարող դիմուի հարցմունքին պատասխանել՝ զժվարության ու բարդության կամ անհրաժեշտ տեղեկությունների բացակայության պատճառով, հարցը տեղափոխվում է գավկենարունի գրադարանը, վոր և պատասխանը կազմելով ուղարկում է շրջանային գրադարանին:

### ՀԱՅՎԵԱՌՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

Բոլոր արվող տեղեկություններն անհրաժեշտ են մանրամասնորեն հաշվի առնել, թե աշխատանքի հաշվառման նալատակով ընդհանրապես և թե այն նկատառումով, վոր միեւնույն տեսակի տեղեկություններ տալը կրկնվելու յե հաճախ, իսկ մի անգամ արգեն հաշվի առաջ տեղեկությունը մի ուրիշն տալը դշուրին եւ:

Շրջանային ու գործարանային գրադարանում չի կարելի հաճախորդներից պահանջել վոր իրենց հարցերը իրենք զրեն, գորովհետեւ նրանցից շատերը յերեսի անգրագետ կամ կիսագրագետ կլինեն և անձամբ զրելու պահանջը անշուշտ գրադարանից կը շատերին: Բայց այդ գրավոր կերպով տրված հարցերը շատ դեպքերում վատ խմբագրած կլինեն ու այդպիսավոր գրադարանապետը դժվարին կացության մեջ կը նկնի—աննար կլինի վորոշել, թե զիմողն ինչ է ուզում: Վորպես կանոն գրադարանապետը ինքը պետք է գրի անց կացնի ՏՐԻՈՆ նարզը: Թղթի ձախ կողմը պետք է նշանակվի ամիսը, թիվը դիմուի ազգանունը ու հարցմունքի բովանդակությունը, իսկ աջ կողմը՝ գրվում է պատասխանը և գործի պատմությունը: Ցանկացողներին անհրաժեշտ են հնարագորություն տալ գրավոր կերպով հարցմունք անելու, գորովհետեւ վոչ ամեն անգամ հաճախորդը վճռականորեն բանավոր կերպով կղիմի գրադարանապետին, յեթե գործը վերաբերվում է իր կյանքի ինտիմ կողմին ու ինզրատուն ցանկանում է ծածկանուն մնալ: Այզպիսի

հարցեցի համար անհրաժեշտ և մի արկղ դնել, խոշոր տառերով հայտարարությամբ, իսկ հետագայում արկղի մոռ մի թղթի վրա գրել հարցը և պատասխանը: Բոլոր շահագրգուփածներին մեկ անգամից բավարարելու համար, հարկափոք և բոլոր ժամանական հետաքրքրությունն ունեցող հարցերը իրենց պատասխաններով գրել և կախել:

Տեղեկատու գիրքը անհրաժեշտ և պահել աչքի ընկնող ուեզում սեղանի կամ մի ուրիշ բանի վրա, վորպեսպի նա իր ներկայությամբ հաճախորդներին հիշեցնի տեղեկություններ վերցնելու հնարավորություն մասին: Բացի այդ, հաճախողի կողմից տեղեկատու գրքի ընթերցումը դարձյալ շահավետ է, գարովհետեւ նա (հաճախորդը) վորոշ, իրեն համար շահավետ տեղեկություններ կիմանա այնտեղից:

Տեղեկատու աշխատանքի ամբողջ փորձը անհրաժեշտ և մասրազննին կերպով ուսումնասիրել և հաշվի առնել:

*Վերոհիշյալ բոլոր դիտողություններն ու պարզաբանումները վերաբերում են վոչ միայն զբաղարաններին, վորոնք մեզ մոտ միայն զավկենորոններում են զանվում, այլ նաև իրադիմ-ընթերցարաններին: Համեմապես լայն ուրագմակաղմանի կերպով պետք և ոգտագործվի վերոհիշյալը որինակելի իրադիմ-ընթերցարանների և ակումբների կողմից:*

*ԹԵՐԹԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ԽՐՃԻԹ ԸՆԹԵՐՑԱՐԱՆՆԵՐՈՒՄ*

(ԿՈՍՏՐՈՄԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ՓՈՐՁԵՐԻ  
ՀԻՄՈՒՆՔԵՐՈՂ)

Թերթը վոչ թե միայն բազմակողմանի այլ նաև ավելի ուարժված և ավելի մատչելի մի գործիք և բաղաքակրթությունը լայն մասաների մեջ տարածելու համար: Եսոր թեր-

թեր ստացող խրճիթ ընթերցարանների թիվը բավականին մեծ է, բայց միևնույն ժամանակ շատ և շատ մեծ է նաև նոր գրականութույն չունեցող, պլակատներից և բազմազան գիտարամաններից զուրկ խրճիթ ընթերցարանների թիվը: Մակայն միանգամայն բացառիկ նշանակություն ունի լրագրական գործը քաղլուսվարական աշխատանքների ասպարիզում և այդ ուղղությամբ տարվելիք աշխատանքները քաղաքական հիմնարկությունների կողմից առաջարկված սիստեմայի մեջ արդեն աչքի են ընկնում:

Մեր հիմնարկությունների գործնեյության մասին աեղի ունեցած մի շարք գիտողություններ բերում են մեզ այն յեզրակացության, վոր մեր քաղլուս—աշխատավորները զեռ բավական չափով չեն գնահատել այն կարեւությունները, վորոնք հնարավորություն կատան նրանց սիստեմատիկ և նպատակահարմար կերպով ոգտագործել թերթը:

Միայն կը իմաստ կարող եմ անդեյինք, վոր լրագիրը ընդհանրապես և լրագրական գործը կարող է լրիվ կերպով բավարարել քաղլուսավորչական աշխատանքի ծրագրի բովության չները, սակայն առանց չափազանցությունների և վատահորեն կարելի յե ասել, վոր սկսնակ բաղկարթական լծիջներում, ընդհանրապես խրճիթ ընթերցարաններում, վոր աեղ քաղլուսվարական աշխատանքը զեռ նոր և սկսել ներգործել անգրագետ մասսայի վրա: Թերթը կարող է լինել միակ միջոցը տեղական աշխատավորների ձեռքում, վորով կարող կը լինենք զրավել մասաները զեպի խրճիթ - ընթերցարանները՝ պարզաբանելով նրանց հետաքրքրող բոլոր տեսակի հարցերը:

Վերջին տարվա փորձը ցույց է տալիս, վոր լրագրից ոգտվելու ամենալավ յեզրականներից մեկն և թերթի բարձրագայն ընթերցումը: Եյս մեթոդը կասկածից զուրս, ավելի գործնական և ավելի արդյունավետ մի ձեզ ե, վորի

կրտ մենք պետք ե մեր զլիսավոր ուշադրությունը դարձնենք,

Զնայած վոր առաջին հայացքից հեշտ ե թվում այս ձեռվի տարվելիք աշխատանքը, սակայն նրա հաջող կիրառումը կյանքի մեջ կախված ե մի շարք կազմակերպչական խնդիրների նկատառումից և, վոր ամենազլիսավորն ե՝ մեթոդական նպատակահարմար ուղղություն ունենալուց, վորոնց աշքաթող անելը կարող ե թուլացնել բարձրացայն ընթերցանության եփեկար, հետաքրքրությունը ու կորցնել նրա նշանակությունը:

Խրճիթ ընթերցարանը չպետք ե ծառայի զուտ պահանջին կենտրոնի համար, նա պետք ե իր ճյուղերը տարածի նաև շրջակա ազգաբնակչության մեջ: Նամանավանդ լրազրի բարձրածայն ընթերցումը չպիսի տեղի ունենա միայն խրճիթ—ընթերցարանի պատերի մեջ նեղ շրջանակի մեջ առած, այլ պետք ե կազմակերպել հարմար տեղերում մի շարք կայաններ բարձրածայն ընթերցանության համար: Այս աշխատանքը հաջող տանելու համար առաջ ենք քաշում տեղական կարող ուժերը այն ե ուսուցչությանը, վերադարձած կարսիր բանակայիներին և այն. յեղած ուժերը համախմբելով լրադրական գործի շուրջը՝ կազմում ենք սշխատավորների մի կազր, վերսոց միջոցով լրազրի ընթերցումը կարողանում ենք հաջող կերպով տարածել այն խափնի մեջ: Դրա հետ զուգընթացաբար գրագում ենք մասսաները դեպի թերթը, լրագությունը: Թե վորքան հաջողություն կունենաք մենք այս ուղղությամբ տարգելիք աշխատանքի մեջ այս արդեն կտխված կլինի ընթերցանության տեղի, ժամանակի և նրա յեղանակի նպատակահարմար լինելուց:

Բարձրածայն ընթերցանության համար ընտրում ենք գյուղի ամենահարմար տեղը, վորտեղ գյուղացիները աշխատանքից ազատ ժամերին հավաքվում են զրուցելու և

իրենց հանոգստյան ժամերը անց կացնելու: Նույնպես և ընթերցանության ժամանակը, անպայման համաձայնեցվում ե գյուղացիների բանվորական ժամերի հետ, բոլոր հայտարարությունները, ընթերցանության մասին, թե բանավոր և թե գրավոր, միշտ միատեսակ ընույթ չեն կրում այլ ուշադրավ և հեռագրբրող իմաստ են ունենում: Որինակ հայտարարվում ե՝ «այսորվա համարում Խորհուրդացին իշխանությունը զորակոչ է հայտարարել: մատնանշված ե ծառայության ժամանակամիջոցը, և ովքեր են ազատվում՝ ծառայությունից: Լրազրի ընթերցումը տեղի կունենա խրճիթ ընթերցարանում այսոր ժամը 7-ին»: Այսպես և միասուուրքի գանձման մասին: Պարզ ե, վոր այսպիսի հայտարարությունները կարգադրով՝ ոզգաբնակելությունն չափազանց կհետաքրքրվի և կուզի ժամբաժան տեղեկությունները իմանալ:

Կարիք չկա ապացուցելու այն, վոր չոր ու ցամաք ընթերցումը առանց պարզաբնումների չի կարող գրավել մասսան դեպի ընթերցարանը, ընդհակառակը հետ կը մղի լոռզներին: Միայն հարց ու պատասխանի ձևով բացարությունները կարող կլինեն ունկընդիրներին պասիվ դրությունից հանել և վորոց կենդանություն ու զրագչություն մտցնել աշխատանքների մեջ:

Թերթի ընթերցումը իր արդյունավետ հետեանքները կունենա այն գեղքում, յեթե զեկավարը ունենա վորոշիցիատիվա և լավ ուսումնասիրի տեղական պայմաններն ու սունձնահատկությունները, ոզգաբնակչության հոգեբանության, նրան հետաքրքրող խնդիրները և այլն: Մասսային մոտիկ լինելը և նրա կյանքով ապրելը մեծ հնարավորություն կան զեկավարող ընկերներին զրավել հասարակությանը դեպի թերթի ընթերցումը:

Առվիտորիայի տնտեսական և կուլտուրական ճշշդրիտ հաշվեառումը նույնպես մեծ գեր և խաղում բարձրածայն ընթերցամանը ուղիղ ընթացք տալու զործում: Այս

գեպքում միմիայն հնարավոր կլինի նախորոք փորոշել թե ինչ նյութերով կարելի յէ զբաղեցնել լսողներին, թե ինչ հոդվածներ և ինֆորմացիաներ կարող են նրանց հետաքրքրել և դրավի գեպի ընթերցումը։ Այստեղից բոլում ե մի հանգամանք ես (վոր անշուշտ պետք ե ի նկատի ունենա ընթերցողը) գա նյութերի խիստ ընարություն անելն ե։ Անրհաժեշտ ե առաջին հերթին ընթերցել ավելի հետաքրքիր նյութեր, ապա յիրկրորդական տեղ բռնող հոդվածներն ու տեղեկությունները, վերջինս այն դեպքում միայն, յեթե ունկընդիրները տրամադիր են լոկու։

Իր աշխատանքի պրոցեսում ձեռք բերած պրակտիկան և գյուղացու հոգեբանության լավ ըմբռնումը միակ ուղեցուցն ե հանդիսանում գյուղական աշխատավորի համար նյութերի ընարություններ անելու դեպքում։ Փորձերը ցույց են տալիս, վոր գյուղական շրջանում յերբեմն պատահում են հոսանքներ, վորոնք ավելի յեն հետաքրքրվում խոշոր քաղաքական խնդիրներով որինակ, տնկլուխորհրդային համաձայնագրով, պաւանկարիյ (այժմ՝ Երրիոյի--ծանոթ. խմբ.) մասին արծարծվող հարցերով, քան հոդային շինարարության մասին գրած հոդվածներով։

Եյութերի ընարություններ անելուց հետո ընթերցողը, այսպես ասած, վերախմբագրում ե թերթը. պետք ե ի նկատի ունենալ, վոր լրագիրը իր եջերում ամսագրի կամ զանազան պատմվածքների հման մանրագննին տեղեկություններ չի տալիս շոշափող հարցերի մասին, վորովհետեւ թերթին պարբերաբար հետեւողը ինքնըսախնդյան իրազեկ ե հարցի ծագման յեվ նրա զարգացման ընթացքին։ Բայց անդրագետ գյուղացին այդ հնարավորությունը չունի, յեվ լրագրի տեկստը նրան բավարարել չի կարող, նրան հարկավոր ե բացատրել՝ բերելով բազմակողմանի որինակներ և փաստեր, խորասուզելով հարցի ծագման յեվ զարգացման պատմության մեջ։ Ան-

գրագետ մասսան միմիայն այս դեպքում հնարավորություն կունենա մարսելու տված նյութի բովանդակությունը։

Յեթե ընթերցել անգլոխորհրդային համաձայնության մասին յեվ չիշեցնել անգլական կառավարության մեր գարած նախկին քաղաքականությունը, չը վերտիկենդանացնել նրա հիշողության մեջ կերպոնի նոտան, չափատմել բանվորական կառավարության մասին յեվ շտալ Մագդոնալդի բնույթագիրը, պարզե, նյութի ընթերցումը եյական հետեւանք չի ունենալ, ինչպես անհետեվանք կանցնի նայեվ ընթացիկ հեռագրների ընթերցումը ֆրանսիական ազգային բլոկի անկման յեվ այլ գեպքերի մասին։ Պարզաբանել այդ տերմինների իմաստը, գա անհրաժեշտ ե ընթերցանությանը հաջող բնագր տալու համար։

Վերախմբագրելով թերթը ընթերցանության ժամանակ նյութի պարզաբանումը պետք ե գարձնել հասարակ յեվ մատչելի։ Կան այնպիսի աերմիններ, վորոնք գյուղացուն միանգամայն հասկանալի չեն։ Այս դեպքում պետք ե գործածել գյուղական ծանոթ և հասկանալի բառեր հենց ընթերցման պրոցեսում։ Նպատականարմար ե բացատրությունների ժամանակ ոգավել յեղած կողմանի հարմարություններից, ինչպիսիք են քարտեզներ, պլակատներ, դիագրամներ յեվ այլն։ Արինակ ուսւաշնական յերկաթուղաքին հարցի եռությունը բացատրելիս կարելի ե քարտեզի վրա մատնանշել տեղը, կամ թե դիագրամներով պարզել գերմանիայի կրած վասները պատերազմի ընթացքում յեվ այլն։ Այս ձեկով առաջ աթեւկաթյան եփեկաը, յեվ գրավում լուզներին գեպի ընդհանուր բնույթ կրող քաղաքական խնդիրները։

Ընթերցողը առանց նյութերը ընտրելու ձեվավորելու ու գասավորելու, առանց տերմինները նախազրույցի

միջոցով պարզաբանելու ու աշխատով լսողների ուշադիրությունը գրավելու գործիչը պիտի անցնի:

Խսդրին այս ձեփով մոտենալը միանգամայն յերաշխափուռ և առողիտորիայի դեպի ընթերցանությունը տածած համակրանքը և վոր ամենազլխավորն եւ հենց սկզբից առիթ և տալիս նրանց գուրս զալ պաստիվ գրությունից ու մասնակցել նյութի քննադատությանը: Այսպես մոքերի փոխանակության և գրույցի ձեռի տեղի ունեցող ընթերցանությունը հնարավորություն և տալիս ընթերցողին տեղն ու տեղը պարզելու իր առաջ զյուղական համայնքի կարծիքը այս կամ այն հարցի վերաբերյալ:

Այսպես յեթե զյուղական մասսայի մասնակելակերպը յեվ նրա համկացողությունը այս կամ այն դեկրետի փոխառության խնդիրների յեվ բանվորագյուղացիական իշխանության կողմից բաց թողած դանաղան հայտարարությունների մասին կը դաստիարակեն, վոչ թե ըստքահանայի, գյուղի չարչու յեվ կուրակի տված տեղեկությունների, այլ խճիթ-ընթերցարանում պարզաբանված լրագրական տվյալների հիմունքներով, այդ դեպքում ըաղկըթական աշխատավորի առաջ զրված ըոլոր խնդիրները հաջողական կը լուծին:

Ա. Վելինելին

## ԽՈՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱԲԱՆԻ ՄԻ ՇԱԲԱԹՎԱԾ ՈՐԱՑՈՒՅՑ (ՈՐԻՆԱԿ)

Կ Բ Բ Ա Կ Բ

1. Առավ. ժամկ. 9—2-ը բաց և գրադարան-ընթերցարանը լրագիր ու գիրք տալու և կարդալու համար (Ամեն որ)
2. Առավ. ժ. 9—12-ը ընդունվում են հարցումներ տեղեկատու բյուրոյի կողմից (Ամեն որ),
3. Ժամկ. 12-ին բացվում եւ տեղեկատու արկղը և մինչև ժամկ. 2-ը արվում են պատասխաններ:

4. Ժամկ. 9—11-ը ընթերցում գրքի և ժամկ. 11—12-ը գրույց կարդացածի շուրջը:
5. Ժամկ. 12—2 ը «Կորչի անգրագիտությունը» ընկ. բը-ջիջի նիստը:
6. Ժամկ. 3—5-ը բարձրածայն ընթերցում «Խորհրդային Հայաստան» թերթի:
7. Ժամկ. 5—7-ը գրույց կարդացածի շուրջը:
8. Ժամկ. 7-ից խճ.-ընթերցարանի վարչության ժողով պատասխաններ մշակելու, չը պատասխանված հարցումներին:

Յ Ե Բ Ե Ք Շ Ա Բ Թ Ի

- 1.
2. 

Վ Ե Բ Ո Հ Ի Հ Յ Մ Լ	Ե Յ Ա Բ Ո Հ Ի Հ Յ Մ Լ
---------------------	-----------------------
- 3.
4. Ժամկ. 9 ից 12-ը միաժամանակ պատի լրագրի խճա-գրության նիստը:
5. Ժամկ. 12—2-ը գեկուցում:
6. Ժամկ. 3-ից մինչև ժամկ. 5-ը բարձրածայն ընթերցում
7. Ժամկ. 5-ից մինչև ժամկ. 7-ը գրույց կարդացածի շուրջը:
8. Ժամկ. 7-ից զրական գեղարվեստական բաժին աշակերտության և գյուղի ուժերի մասնակցությամբ:

Զ Ե Բ Ե Ք Շ Ա Բ Թ Ի

- 1.
2. 

Վ Ե Բ Ո Հ Ի Հ Յ Մ Լ	Ե Յ Ա Բ Ո Հ Ի Հ Յ Մ Լ
---------------------	-----------------------
- 3.
4. Ժամկ. 9—12-ը միաժամանակ խճ.-ընթերց. վարչու-թյան նիստը թե ընթերցիկ աշխատանքները կանոնավորելու և թե չը պատասխանված հարցումներին և բողոք-ներին պատասխաններ մշակելու համար:
5. Ժամկ. 12—2-ը լրագրի բարձրածայն ընթերցում:
6. » 3—5-ը գրույց կարդացածի շուրջը:

7. » 5—7-ը կոմսոմոլի բնագիտական խմբակի պարագաներ:

8. » 7-ից բջիջի գոնքաց նիստը և զեկուցում:  
Հ Ի Ն Գ Շ Ա Բ Թ Ի

1.  $\begin{cases} Վ, Ե Բ Ո Ւ Ւ Խ Մ Լ \\ Վ, Ե Բ Ո Ւ Ւ Խ Մ Լ \end{cases}$   
2.

3.  
4. Առավ. ժամի 9-ից միաժամանակ եքսկուրսիա:  
5. Յերեկոյան ժամի 6-ից պատի լրագրի խմագրության  
նիստը:

Ո Ի Բ Ա Թ

1.  $\begin{cases} Վ, Ե Բ Ո Ւ Ւ Խ Մ Լ \\ Վ, Ե Բ Ո Ւ Ւ Խ Մ Լ \end{cases}$   
2.

3.  
4. Ժամի 9-ից 10-ը խրճ.-ընթ. վարչության նիստը պատասխանելու համար չը պատասխանված հարցումներին և բողոքներին:

5. Ժամի 9-ից 12-ը բարձրածայն ընթերցում լրագրի:  
6. Ժամի 12-ից 2-ը զրույց եքսկուրսիայի տպագործությունների և հետեանքների մասին:

7. Ժամի 3-ից 5-ը զրքի բարձրածայն ընթերցում:  
8. » 3-ից 7-ը զրույց կարդացածի շուրջը:

9. » 7-ից ներկայացում:

Շ Ա Բ Ա Թ

1.  $\begin{cases} Վ, Ե Բ Ո Ւ Ւ Խ Մ Լ \\ Վ, Ե Բ Ո Ւ Ւ Խ Մ Լ \end{cases}$   
2.

3.  
4. Ժամի 12—2 ը կոմսոմոլի բջիջի քաղլնթերցում:  
5. » 3—5-ը բարձրածայն ընթերցում լրագրի:

6. » 5—7-ը զրույց կարդացածի շուրջը:

Այս որացույցը կազմելիս ի նկատի ենք ունեցել այն հանգամանքը, վոր լրագրների բարձրածայն ընթերցում լինելու յե ամեն որ, բայց քանի վոր գյուղերում կան

գրագետներ, վորոնք իրենք կարող են կարգալ լրագիրը, այդ պատճառով ամեն առավոտ խրճ.-ընթերցարանը վարող ժամեր բաց և լինում կարդացողների համար: Հարցումներ և բողոքներ կարող են առվել ամբողջ որը, բայց պատասխանի համար նշանակվում է վարող ժամ: Յեթե կան ուժեր և հարժարություն, կարելի յե ունենալ հատուկ մարմին հարցումներին պատասխանելու աշխատանքի կոչելով համապատասխան մասնագետներ, կարիքի գեպըում:

Զեկուցումներ կազմակերպելիս ոգավելու յեք գյուղատնտեսից, կոոպերատորից, բժշկից և ուսուցչից:

Յեթե որացույց կազմելիս անհնար և նախատեսնել թե ով կիխնի դասախոսը կամ զեկուցողը, պետք և նախորոք գյուղի պատրաստաված ընկերներին հանձնարարել ոգավելով դրքերից՝ կազմել ուժերատգեկուցում կամ գյուղի շինարարության ու կուլտ-կրթական աշխատանքներին վերաբերակ հարցեր շոշափել այդ ժամին:

Զեկուցումները պետք ե լինեն գյուղատնտեսության, կոոպերացիայի, բնագիտության և այլ հարցերի շուրջը:

Եքուուրափաներ կարելի յե կազմակերպել թե զեսի մոտակա գյուղերն ու ավանները և թե քաղաքները: Առաջին գեղքում նպատակ ե լինում ծանոթանալ օրինակելի տնտեսության, արտելի կամ որինակելի կուլտ-հիմնարկի հետ, իսկ յերկրորդ գեղքում՝ շփվել քաղաքի բանվարության հետ և ծանոթանալ քաղաքի թե արդյունաբերական, թե խորհրդային և թե այլ հիմնարկների հետ:

Ինչ վերաբերում ե զանազան կամ զանիաներին, անհրաժեշտ ե զրանց ժամանակ որացույցի բովանդակությունը վերցնել կամպանիայից:

Խրճիթ-ընթերցարանը շաբաթը մեկ որ պետք ե լինի փակ:

Հաստ մեր որացույցի դա յե հանդիսանում է երկուշաբթին, բայց կարելի յե նաև որը փոխել, ցանկալի կօ լիներ, վոր առհասարակ խրձ..ընթ. վոչ մի որ փակ չլիներ: Կուսումովի քաղընթերցան և բնագիտական խմբակի պարագունքներին մուտքն ազատ ե լինելու աշխատավոր գլուղացիության համար:

Խրձ..ընթ. վարչության նիստերը կարող են միշտ տեղեկատու աշխատանքներին նվիրված չլինել, այլ այնտեղ պէտք ե ընտվնի նաև խրձ. ընթ. ընթացիկ աշխատանքներին վերաբերյալ հարցելու:

Այս որացույցն որինակելի յե և կարող ե փոփոխությունների յենթարկվել տեղերում տեղական պայմաններին համապատասխան:

Դժկավարմիլով այս որացույցի ժամերի բաշխումով և ձեռք անհրաժեշտ ե տեղերում կազմել ամսական որացույցներ և ամեն շաբաթ կոնկրետ մասնանշել նյութը և որացույցը կախել աչքի ընկնող տեղ ի գիտություն ամենքի:

Նախքաղուսպիլսվարի՝ Քաջախյան  
Քարտուղար՝ Գ. Հարությունյան

### ՁԵՌԱՅԻՆ ԱՅԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Ժամանակն ե կազմել խրձիթ-ընթերցարաններում տարինիք ձմեռային աշխատանքների նախագիծը. որինակինչպիսի խմբակներ և հարկավոր կազմակերպել, խմբակները ինչպես պետք ե աշխատեն և ինչ պետք ե անեն, ինչ թերթեր պիտի գուրս գրել, ինչ գասափառություններ կազմակերպել շեֆից ինչ կարելի յե սպասել և այլն:

Անհրաժեշտ ե հաշվի առնել նաև հիմնական աշխատակիցներին, մաւանանշելով, թե ով ինչ աշխատանք ե տանելու:

Նախագծի մշակման մեջ անպայման պետք ե ժամակից անել նաև ուսուցչությանը: Ամսուային վերապատ-

բառոտական գասընթացքների ժամանակ նրանք շատ բան են սովորել: Կարելի յե նուե ըրջանային ուսուցչական խորհրդակցություններ կազմակերպել: Հարկավոր ե զեպի խրձիթ-ընթերցարանները գրավել գյուղատնտեսներին, բժիշկներին և հողաչափերին: Կոմյերիտականների, կումունիստների և շեֆերի մասին խոսք լինել չի կարող, առանց նրանց մենք տեղից չենք կարող շարժվել:

Աշխատանքների նախագծի մասին պետք ե լայն կերպով բացազրել գյուղացիներին զիջոցների միջոցով, թե ինչպես պետք ե աշխատի խրձիթ-ընթերցարանը և ինչ աշխատանք պիտի տանի նա ձմեռը:

### ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԶՊԵՏՔ Ե ԸՆԴՀԱՏԵԼ

Բայց այդ բոլորի ժամանակ վոչ մի զեպում չի կարելի կանգնեցնել ընթացիկ աշխատանքները խրձիթ-ընթերցարաններում. խրձիթ-ընթերցարանը աշխանք անպայման պիտի աջակցի գյուղացուն: Նա պիտի գյուղացուն խորհուրդ տա, թե նա ուր և ինչպես պիտի արտահանի եր ցորենը և այլ մթերքները: Նա պիտի ցուցմունքներ տա, թե ինչպես բարեկավել կոոպերատիվի աշխատանքները, նա պետք ե տեղեկանք տա գյուղացուն և կարմիր բանակայինների ընտանիքներին, թե ճշտությամբ ե արդոք նրա վրա միասնական տուրք զբվել: Նա պետք ե զրի զիմումներ, գանգատներ, ուր հարկն ե, սխալը ուղղելու համար: Պետք ե բացազրություն տա, թե ինչ ե նշանակում ապահովագրումը: Նա պետք ե ազիտացիա մղի ե պարզաբանի խորհուրդների ընտրության նշանակությունը, մասնակցի համասիռնենական ուսուցչական համագումարների նշանակության մասին բացատրություններ տալում ե իր մասնակցությունն ունենա ըրջանային ուսուցչական խորհրդակցություններում և համագումարներում: Վերջապես չի կարելի աչքաթող անել նաև ազրուառոպագանդան և սանիտարական աշխատանքները:

Ամբողջ այդ աշխատանքների մեջ հատկապես մեծ տեղ պետք է գրավին միջազգային քաղաքական դրության մասին բացադրությունները, խորհուրդների ընտրության մասին տարվելիք ազիտացիան, տերիտորյալ գորահափառների մասին պարզաբանումները և այլն ու վերջապես, վոր և ամենազլավորն ե, անընդունակ առաջարկ տված վնասների չափերի և նրանց գեմ կովի միջոցների, ինչը պես նայել այն ոգնության մասին բացադրություններ, վորվել և խորհիշեանության կողմից:

Ավելի նպատակահարմար է հետեւել թերթերին, գյուղացիներին կարդալ հետաքրքիլ հոգվածներ: Անհրաժեշտ է թերթերից դուրս գրել հետաքրքիր տեղեկություններ և կողնել պատին:

Անզագար ազիտացիա մզել թերթերին բաժննորդագրվելու համար: Կամովին բաժանորդագրվող դյուզացիների թիվը խրճիթ-ընթերցաբաններում տարվելիք աշխատանքների հաջողության չափանիշն ե:

## Ի՞ՆՉ ՊԵՏք Ե ԱՆԻ ՍԱՆԻՏԱՐ ՀԱՅՆԱԺՈՂՈՎԸ ՄԱ- ԼԱՐԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼԻՄ.

1. Հաշվի առնել շրջանի բոլոր մալարիանով հիվանդներին հատուկ ուշադրություն դարձնելով թուրքեստանի և կովկասի ճակատներից յեկած զրացրման յենթարկված կարմիր բանակայինների վրա:

Իրենց կարմիր բանակայինների գրքույիներում նրանք պետք է վոր նշանակված ունենան իրենց դողերոցքի հիվանդության մասին: Անհրաժեշտ է բժշկվելու համար՝ բոլոր հիվանդնարին ուղարկել տեղական հիվանդանոցները և ամրութատորիաները:

2. Հետախուզել մոծակների բազմացման տեղերը: Փոքր ճահիճները, տուփակի հարցերը և լցոված փոսերը (զյու) և ուրիշ ջրաժբարները, նրանց վոչնչացման նպա-

տակով, կամ հող լցնելու կամ կրածրի մեջ նավթ կամ կերասին լցնելու մնջոցով:

3. Հետեւել ջրնորներին, կիսատակառներին, տակառներին և փայտե ուրիշ ամաններին ծածկելով նրանց բերանները կափարիչներով և հենց դրանով թույլ չտալ մոծակների աճեցման արհեստական տեղերի առաջանալուն:

4. Վորտեղ հնարավոր և անցկացնել բնակություննեցող շենքերի պատուհանների ցանցապատումը:

5. Առաջին հերթին ցանցապատել խրճիթների և հիվանդանոցների պատուհանները:

6. Հետախուզել մոծակների ձմեռն անցկացնելու տեղերը և միջոցներ ձեռք առնել նրանց վաչնչացման համար մուխ տալու միջոցով:

7. Դողերոցքի վերաբերմամբ կազմակերպել մի քանի գասախոսություններ հատկապես շեշտելով գողերոցքի նշանակությունը տված շրջանի համար:

8. Համապատասխան նյութերով ոգովել և զինելու հարստացնել դողերոցքի ցուցահանդեսը և անկյունը խրճիթ-ընթերցաբանում:

## ԲԱՆՎՈՐԱԿՈՆ ԱԿՈՒՄԲ ՅԵՎ ԲԱՆԹՂԹԱԿ- ՅԻ ԱՆԵԼԻՔԸ

Եերկայսւմ նկատվում է ակումբները միացնելու քուռն ձգառում, վոչ թե միայն նահանգային, այլ նայել համառուսական մասշտաբով, նպատակ դնելով առ նրանց աշխատանքներին մի ընդհանուր, վորոշակի բնույթ՝ մասսաներին կոմմունիստական հոգով դաստիրակելու համար:

Այս նպատակը միանգամայն բնորոշում է բանակումների հեռագոր ապագայի խնդիրները յեզ:

Բանվորական ակումբում բանվորը կարող է ստանալ բոլոր տեսակի հարցերի պատասխանը: Այստեղ նա կարող է լիովին գործադրել իր ընդունակությունները և սրանով

այն ամենը ինչ անհրաժեշտ է նրան կատարելազործվելու և մոտավորապես զարգանալու համար։ Ակումբը ցույց կտա նրան բանֆակի և համալսարանի շիտակ ճանապարհը։ Ճիշտ ե, ակումբը չի կարող ամեն դեպքում լրիվ պատասխան տալ բոլոր հարցերին, բայց նա անպայման ցույց կտա այն հիմնական ուղին, վորով պետք է ընթանա խորհուրդային հանրապետությունների միության հարտգատ քաղաքացու զարգացման գործը։

Ակումբը իր միջոցներով բոլորովին նպատակ չունի անդամներին այս կամ այն ծավալով գիտություն տալու։ Վոչ։ Նրա նպատակն է տալ անհրաժեշտ գործնական ունակություններ և վորոշ մտավոր վարժություններ, զարկ տալով նրանց ինքնուրույն և բազմակողմանի զարգացման գործին։

Կոմմունիստական դաստիարակությունը կոնկրետ և դորձնական ձեվով պետք է արտահայտվի ակումբի քաղաքաւունական և գաղափարական (գիտության գեղարվեստ, կրոնական) աշխատանքների մեջ։ ուրիշ խոռովով ասած՝ քաղլուսվարական և արտադրողակենցաղային աշխատանքների մեջ։

Ընդհանուր առմամբ հարկավոր է ակումբում աշխատանքները հետեւյալ կ'րագու տաներ։

1. Ակումբի ազգեցությունը բանվորական մասսայի վրա ընդհանուր առմամբ (մասնավորապես բանվորական կազմակերպության վրա)։

2. Ակումբի մասսայական աշխատանքը՝ ա) պրոպոլականդա լենինիզմի մասին, բ) քաղլուսվարական, գ) հակակրօնական, դ) գեղարվեստական աշխատանք ե) ֆիզիկուրուրա, զ) լրագրական աշխատանքներ, յե) զբագրան և այլն։

3. Խմբակային պարապմունքները ակումբում։

4. Ակումբի ազգեցությունը կուսակցական կվայլ Փիկացիան բարձրացնելու գործում։

### 5. Կենցաղավարական աշխատանքներ։

Ակումբի գործներության ընթացքում անհրաժեշտ է տարբերել յերկու մոմենտ, նախ ակումբի ներգործումը մասսայի վրա, վորի բնույթը պայմանավորվում է ակումբի անմիջական խնդրով այն ե՛ մասսային տալ կոմմունիստական դաստիարակություն։

Յեկրորդը՝ մասսայի ուսումնասիրությունը՝ մի աշխատանք, վոր ներկայումս գտնվում է անբավարար դրության մեջ։

Իմանալով ակումբային աշխատանքների ընդհանուր բնույթն ու պայմանները՝ կարելի ե ճիշտ վորոշել բանթի խթակիցների հարաբերությունը այդ աշխատանքների վերաբերյալ։

Կասկած չկա, վոր լրագրական գործը գտնվում է բանվորների ձեռքում։ Այս ամենամեծ զենքն է տգիտության, խավարի ու զանազան թերությունների ու չարագործությունների գեմ կովելու համար։ Լրագրությունը բացահայտում է նայել այս կամ այն աշխատանքի դրական կողմերը, նրա առավելությունները։

Վոչ վոք, բացի բանթխտակցից, վորը միշտ հանդիսանում է ակումբի ավելի ակտիվ անդամը, չի կարող ավելի նուրբ և ճկուն զրի առնել ու լուսաբանել թերթերում այնպիսի յերեվույթներ, ինչպիսին ակումբի մասսայի վրա թողած ազգեցությունն ե և այն տպագրությունները, վոր մասսան իր հետ ակումբ ե բերում։

Բանթխտակցը «կարող է կազմակերպել հասարակական կարծիքը», շատ ճիշտ ե ասել Մ. Խ. Ռւյանովան «Պրավդայի» թիտակիցների խորհրդակցական ժողովում։

Չի կարելի ժխտել այն, վոր բանթխտակցը բավականին լրիվ է լուսաբանում թերթերում ակումբային կանքում աչքի զարնող մոմենտները, սակայն չափազանց քիչ տեղեկություններ են տալիս ակումբի ամեն-

նորյա աշխատանքների մտօին, վոր հանդիսանում և կենացքներ:

Բանթղթակցի աշխատանքները կարող են լինել ինդիվիդուալ—անհատական և կոլեկտիվ—միացյալ:

Բանթղթակցի ինդիվիդուալ աշխատանքները պետք է լուսավորական ընթացք ունենան 1) ակումբների ամենորյա կյանքը, ինչպես առած ակումբի կենցաղը և նրա անդամների, կենցաղավարությունը մասսայի մեջ, 2) ակումբի խմբակային զբաղմուքները, 3) ակումբային կյանքի աշխատանքները:

Եղոր այդ աշխատանքները պետք ե տարվեն վորոշ հասարակական աշխարհայացքով. մասնահշված մումենտները պետք ե լուսաբանված լինեն զիմավորապես մասսայի քաղաքա-կենցաղավարական զարգացման տեսակետից:

Ինդիվիդուալ աշխատանքների ժամանակ բանթղթակցը դուրս ե գալիս վորակես մասսայի կազմակերպիչ, վորպես հասարակական կարծիքի արտահայտիչը և նրա առաջացման ակտիվ մասնակցողը:

Առօրյա ակումբային կյանքը դիտելով բանթղթակցը վորոշում ե թե ինչպես ե քաղաքակրթական իդեան, հատկապես Իլիֆի ավանդները, անդրադառնում բանվորական մասսայի վրա, ինչպես ե նա ժարսում այդ ավանդները և ինչ ազդեցություն ե թողնում մասսան իր հերթին ակումբի վրա.

Պատճառական խոսակցություններից և մասնավոր զրույցներից պարզ կարելի յե պատկերացնել ակումբի առավելություններն ու թերությունները այս կամ այս ուղղությամբ տարվելիք աշխատանքների ընթացքում:

Հետեւելով ակումբի խմբակային զբաղմուքներին բանթղթակցը նայում է նրանց, վորպես ամբողջության մի մասնիկի, վորպես ակումբի անդամների ակտիվ աշխատանքների մի գործնական լուրաբառութիւնի, վորպես

քաղլուսավարական գործի հիմունքներն ուսումնասիրող մի գենըի վրա:

Այս ամենը վերաբերում է բոլոր խմբակներին առանց բացառության:

Ակումբային կամպանիայի և այլ աշքի զարնվող ժումաների լուսաբանման գործում բանթղթակիցները ցույց են տվել մեծ ակտիվություն: Բայց ցավը նրանումն է, վոր այդ նկարագրությունները կրում են պաշտոնական բնույթի, «վորքան քիչ, այնքան լավ»: Յերբեմն կարճ ընույթի մեջ գորքան քիչ, այնքան լավ»: Յերբեմն կարծ լրագրական թղթակցությունները կենդանի զրույցի ձեփով մի քանի անգամ ավելի պարզ կարող են տալ ակումբի մասսայական աշխատանքների բնույթը, քան յերկար ու ձիգ՝ ձանձրալի պաշտոնական նկարագրությունները:

Ահամեմատ ավելի բազմակողմանի յեն բանթղթակիցների միացյալ աշխատանքները: Իհարկե այդ աշխատանքը յեփս պիտի քաղաքական արդյունարերական-կենցաղավարական թեքումն ունենա:

Արտակարգ կերպով շատ բան կարող է անել բանթղթակիցների կոլեկտիվ աշխատանքը, զբական խմբակները: Այսպիսի զբական խմբակներն ուղղություն են առաջիս ու գոգեվորում յուրաքանչուր բանթղթակցի մասնավոր աշխատանքները, պատրաստելով նրանցից վոչ միայն յոկ քննադատներ, այլ ակտիվ աշխատակիցներ: Ակումբային կյանքի լուսաբանումներն այս դեպքում սիօնեմատիկ և ձեվակորված բնույթ են կրում:

Հաճախ զբական խմբակների առաջ դրված խնդիրների շարքում լինում են նայելի մի շարք ձեռնարկությունների կաղմակերպման, ուսումնասիրության և թղթակցության խնդիրները, այն և «բանթղթակիցների խմբակ»-ի կազմակերպմանը ձեռնարկելու աշխատանքը, վորի գոյության գեպըում բանթղթակիցները կարող են ձեռք բերել թղթակցի համար անհրաժեշտ գիտությունները և գործնական գործություններ: Ակումբում հատկապես մեծ զեր կարող

ևն խաղալ գրական յերեկոները մասսայական աշխատանք-  
ներով կազմակեպված։ Գրական յերեկոները ունենում են  
քաղաքագրականական վորոշ ազդեցություն մասսայի վրա։

Բանվորը, շուտ հեշտ և ժատչելի կերպով գրված կանո-  
նավոր աշխատանքների միջոցով կարողանում է ծանոթանալ  
մեր կլասիկ գրականության հետ՝ կազմակերպելով հասարակ  
յերեկոներ ինչպես որինակ. «բանվորական կենցաղը ռուս  
գրականության մեջ» յերեկո և այլն. նույն ձեկով կարելի  
յե ծանոթանալ նայել ժամանակակից գրականության հետ,  
«Դեմյան Բեդնու յերեկոն» «պրոլետարական պոեզիայի  
հետեւողների» և այլն։

Գրական, գեղարվեստական բեղերտու արների աղքա-  
տության գեղքում, հաջող կերպով կարելի յե այդ բացը  
ծածկել ինքնուրույն պիեսաներով, ազիտացիոն արագ-  
սանություններով և այլ գրախմբակային աշխատանքնե-  
րով։

Ազիտացիոն դատերը, վոր մեծ սիմպատիա ունին  
մասսաների աշքում, նույնպես գրական խմբակների գործ և։

Բայց առանձնապես մեծ և բանթղոտակցի գերը պա-  
տի լրագիր կազմելու գործում, վորը մեզ մոտ մեծ գովա-  
սանքների և արժանացել։

Համարձակ կերպով կարելի յե ասել, վոր պատի լրագի-  
րը, այդ «խոսող պատերը» յեկել հասել են մեր առաջնորդներ։  
պետք ե այնպես անել վոր մի աեղ կանգնած շման. այդ  
հառաջադիմեն, զարգանան խորացրած և լայնացրած բովան-  
դակությամբ։ Իսկ այդ առանց մի խոռըի հնարավոր և  
միյելնույն բանթխտակիցների ամենամոտիկ մասնակցու-  
թյամբ. իսկ հակառակ գեղքում թույլ մոտեցումը խիստ-  
կը վնասի այդ աշխատանքներին և կը փշացնի ամեն  
ինչ։

Գրական խմբակը կարող և սեալ ազդեցություն-  
ունենալ նայել գրադարան-ընթերցարանի վրա, թի-

կուզ գրականության ընտրությունների կամ ուեկոմենդա-  
ցիայի մաքով։

Բոլոր վերահշյալներից պարզվում է թե գորքոն  
մեծ և բազմակողմանի յե բանթղոտակցի գործը ակումբում։  
Այս միայն սուր պայմաններում, իսկ յեռանդով և անձնվեր  
աշխատանքի ժամանակ նրա աշխատանքները խոշոր հե-  
տեւանքներ կարող են ունենալ։

Սյս հոդվածում մեզ հաջողվեց ժամանակել ակում-  
բի աշխատանքների և բանթղոտակիցների առաջ գրված  
ինպիրների մասին, այն ել միայն սխեմատիկ կերպով։  
Ինպիրը հիմնովին պարզելու համար պահանջվում է, վոչ  
թե հոդվածներ գրել, այլ ամբողջ գործը կոլեկտիվ ու-  
ժերով կազմակերպել։ Բացի այդ յուրաքանչուր ակումբ  
չի կարող իր աշխատանքները լայնացնել այն պես, ինչպես  
վոր մատնանշեցինք արտեղ։ Ակումբը հարմարվում է իր  
տեղական պայմաններին։

Անհրաժեշտ է, վոր ակումբը իրանից ներկայացնի  
կոմմունիստական դաստիարակչության ելեմենտները հա-  
վաքող մի միջոց, իսկ բանթղոտակիցները լինեն ալումե-  
տած նրա աշխատանքների ակտիվ հայելին։

Խ. Ցիմմերման

## ՊԱՏԻ ԼՐԱԳԻՐԻ ՍԽԵՄԱ. ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԿՈՂՄ

1. Պատի լրագիրը եր եռթյամբ լինելով քաղաքական  
ուսագործության մասսայական միջոցներից մեկը, անհրաժեշ-  
տաբար շարահյուսված և լինելու պարզ և կոնկրետ կերպով։  
Նրա եջերում լույս աեսնող հոդվածներն իրենց բովան-  
դակությամբ պետք է համապատասխանեն մասսայի գի-  
տական մակարդակին ու լուսաբանված լինեն փաստերով։

2. Պատի լրագիրը յերբեք չպետք է տպված լինի  
մեքենայի (ուսինգտոնի) վրա կամ տպագիր. նա պետք

54

ե գրված լինի ձեռքով, խոշոր և հեշտ ընթերցանելի տառապավ:

3. Բանվորությունը և նամանավանդ գյուղացիությունը մտածում ե պատկերներով և այդ տեսակետից նկարները կնպաստեն լրագրիք հետաքրքիր և ըմբանելի գարձնելուն. նկարների համար կարելի յէ գործածել կարմիր, կանաչ, կապույտ և այլ գույներ, նույնիսկ թառաք, վորոնցուգով պիտի ե գրել նայել լոզունգները, բոլոր վերնագրերը, գծել հոդվածաշարքերը իրարից բաժանեց բարակ գծերը և այլն:

4. Նկարիչ ըլ լինելու գեպքում կարելի յէ ոգտովի փոխանցող (կանոնավոր) թղթից, կամ ուղղակի զանազան թերթերից ու պարբերականներից կտրած նկարներ կպցնել: Փոխանցող թղթից ոգտավելու ժամանակ արգեն ընտարած նկարի տակը դնում են փոխանցող թուղթը, իսկ վերջինիս տակը լրագրի այն մասը, վորուել ցանկանում են նկարը գծագրել ու սեվ մատիտվ նկարի հիմնական գծերը նորից գծում ու տուշ են տալիս:

5. Անհրաժեշտ ե նկարները լրագրի յերեսում ցըել այնպես, վեր նրանցից յուրաքանչյուրը համապատասխանեայն հոդվածի բովանդակությանը, վորի մոտ կպցված յէ բոլոր նկարների մի տեղ հավաքելը անթույլատրելի յէ:

6. Վերնագրերը իրենցից վերելի վերջացող հոդվածներից գտնվելու յեն առնվազը կես լուցկու, իսկ հոդվածները վերնագրերից՝ մեկ սանտիմետր հեռավորության վրա:

7. Պատի լրագրերը չպետք ե լինի յերկար, այլ լայն Յերկար լինելու գեպքում պատին կպցրած ժամանակը անհնար կը լինի կարդալ, նամանավանդ ընթերցաների շատության գեպքում. լայն լրագրեր այդ, կողմից հնարավորություններ տալիս ե. Բացի այդ պատի լրագրեր փակցված պետք ե լինի գետնից այնքան բարձր, վոր կարգանա կարդալ և մեծահասակը և փորբանասակը. մոտա-

վորապես միջահատակ մարդու բարձրության վրա և դարձվելու:

8. Զեռնամուխ լինելով պատի լրագրի հրատարակմանը, ամենից առաջ անհրաժեշտ ե ընտրել խմբագրական կոլլեգիա բաղկացած հինգ կամ յերեք հոգուց. Խմբագրական կոլլեգիայի պարտականությունն ե՝ ղեկավարել ամբողջ աշխատանքները՝ նյութերը բաշխելով այս կամ այն անհատների ու կոլեկտիվների մեջ, լրագրի բաժինները իրենց մեջ բաժանելով, մտածելով նկարչի, մաքրագրողի, թղթի մասին և այլն:

9. Պատի լրագրերը մասամբ նպատակադրելու յէ իր շուրջը հավաքել ու այդպիսով ինքնագործունեության ասպարեզ քաշել բանփորներին և գյուղի աշխատավորներին ու պատրաստել նրանցից բան. և գյուղ. թղթակիցներ:

10. Աշխատանքները տարվելու յեն կոլլեկտիվ առջուն. ոս կնպաստի նրա հեշտացմանն ու խորացմանը: Լրագրի հրատարակման շուրջը պետք ե համախմբել գյուղի կուլտուրական ուժերին՝ ուսուցչությանը, կոմունալին, կարող կոմմունիտաներին, գյուղատնտեսին, բժշկին և այլն:

## ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԼԻՆԻ ՊԱՏԻ ԼՐԱԳԻՐԸ

1. Հասարակական բաղաքական կյանքը իր բորթին իրագարձություններով անհատկանալի յէ մթությունից նոր արթնացած բանփորության և գյուղացիության համար. Լրագրը այստեղ գալու յէ նրանց ոգնության իր բուռարանություններով, նա լինելու յէ նրանց մաքի զեկավարը:

2. Գյուղացին և բանփորը, հենց իրենց շահերի ահապակետից պետք ե իրագել լինեն արաւասհմանում կատարվող բաղաքական իրագարձություններին, նամանավանդ այն ղեպքերին և բաղաքական ակտերին, վորոնք բնդհանրական արժեք ունեն և մեր պրոպրոդայի համար

եյական փաստեր են, չետաքրքիր կլինեն նամանավանդ վերջին հեռագիրները, Պատի լրագիրը ձկուն պետք ե գոնվի իր եջերում մեջբերումներ և քաղվածքներ անելու այդպիսի լուրերից:

3. Գյուղացու ու բանվորի համար ավելի քան անհրաժեշտ ե իրազեկ լինել նամանավանդ խորհրդային հանրապետություններում տեղի ունեցող նորություններին, դեպքերին և արտաքին ու ներքին քաղաքականությանը: Պատի լրագիրը աշքաթող չպետք ե անի նաև այս հանգամանքը:

4. Պատի լրագրի առանձնատուկ կողմը նրա թարմությունն ե: Իր յերեսներում արտացոլելով հասարակական հրատապ խնդիրները՝ նա միենույն ժամանակ լինելու յե մասսայի պահանջների անմիջական արտահայտքը, Հիմքում ունենալով այդ հանգամանքը և միենույն ժամանակ լինելով մասսայի իդեյական դեկավարը՝ նրա բռվանդակությունը միշտ իր սնունդն ստանալու յե որվա մամենակից, արտահայտվելու յե որվա չարիքների շուրջ: Գըլթիավոր իդեյան միշտ կարող ե նույնը մնալ, բայց մատերյալը պետք ե վերցրած լինի կյանքի նոր յերեվույթներից ու իրադարձություններից:

5. Յելնելով այս հանգամանքից՝ պատի լրագրի նյութերի պահեստը զլիավոր առմամբ լինելու յեն ավյալ գյուղի, շրջանի և գավառի իրադարձությունները, խոշոր նորությունները՝ կատարված թե տնտեսական և թե հասարակական կյանքում:

6. Պատի լրագիրը լույս տեսնելով գյուղացու և բանվորի անձարտկության պայմաններում՝ մի գրություն, վորի համար անցյալում տիրող գասակարգերն են միայն մեղափոր, բայց վորը անշուշտորեն անհրաժեշտ ե ցըել, գյուղացուն իրազեկ գարձնելով նրան հետաքրքրող բոլոր ականքին և յերեվույթներին՝ լինելու յե գյուղացու և բանվորի խորհրդատուն ու տեղեկատուն:

7. Յելնելով վերոհիշյալ դրությունից՝ նա պետք է շաշափի հետեւյալ հիմնական խնդիրները՝ կապված տեղական պայմանների հետ:

ա. Յեթե թերթը քաղաքումն ե լույս տեսնում՝ արդյունաբերական ճյուղի բարգավաճման նպաստի, յեթե գյուղում գյուղի և շրջանի տնտեսական, ինչպես և կուլտուրական մշակությունների զարգացման անհրաժեշտ նախադրյալները պարզի:

բ. Բանկուպների, արտելների, փոխ-ոգնության կոմիտեների և պետական ապահովագրության նշանակությունը անտեսության և արդյունաբերության զարգացման նկատմամբ պարզի:

գ. Գյուղացիության և բանվորության կուլտուրական բաղադրական լուսավորության մակարդակի բարձրացումը, վորպես տնտեսության և արդյունաբերության զարգացման գրավական:

դ. Հին կենցաղի, նախապաշտումների և հին սովորությունների հակադրումը նոր կենցաղին: Հին կենցաղը վորպես խանգարիչ հանգամանք, կոլեկտիվ աշխատանքի տուավելությունները:

յ. Անգրագիտության վերացումը, վորպես մեր տընտեսության բարգավաճման խթան:

զ. Բացարություն բնական յերեվույթների ու տարեկան իրական փաստերի առթիվ:

8. Պատի լրագիրը իր մտքերը զլիավոր առժամբը պետք ե արծարծի գեղարվեստական պատկերների, գրվածքների և վոտանավորների միջոցով: Խոր ազդեցություն են թողնում նամանավանդ յուժորով գրված հոդվածները (ֆուլեյտոնները) յերգիծաբանական գրվածքները, վորոնք առող կերպով պետք ե խալթեն տվյալ միջավայրում տեղի ունեցող տգեղ յերեվույթները, հակազրելով իսկական ուղին և գովելի վարմունքը ու գործողությունը:

### ՅԵՐԲ ՅԵՎ ՎՈՐ ՆՅՈՒԹԻ ԸՆԿՐՁԸ ԳՐԵԼ

1. Հենց այն հանդամանքը, վոր պատի լրագիրը անհրաժեշտաբար պետք է արձագանքի որվա անմիջական ինդիքներին՝ գալիս և պնդելու, վոր միշտ պիտի հոգվածների ընտրություն անել ժամանակը նկատի առնելով:

2. Պատի լրագիրները արձագանքելու յեն այն բոլոր կամպանյաներին, վորոնք տարգում են խոր. իշխանության կողմից, աշխատելով պարզել նրանց իմաստն ու տռաջազրած լոգունգները բաղվածքներ տալով լրագրներից. Յեթե, յենթագրենք Հայաստանում տարգում և խորհուրդների ընտրության կամպանիան, լրագիրը իր եջերում մեծ տեղ է տալու այդ կամպանիային, ագիտացիայի ձեփով բացատրելով թե բանվորության և գյուղացիության համար ինչ նշանակություն ունի այդ կամպանիան՝ ընդգծելով բանվորության և գյուղացիության շահերից բղխող այն վերաբերմունքը, վոր պիտի ցուցադրեն նրանք ընտրությունների ժամանակ:

3. Մոտ ամիսներու վերջացան կոմիւնի 13-րդ համագումարը և կոմինտերնի 5-րդ կոնգրեսը: Անա սրանց վորոշումները պետք է առանցքը կազմեն այն բոլոր իդեալական զեկավարության ու ցուցմունքների, վոր լրագիրը հրամցնելու և մասսային:

4. Պիուզում և արդյունաբերության մեջ աշխատանքները սեղսնալին բնույթ են կրում: Այդ բանը աշքի յեղաբնվում նամանավանդ դյուզերաւմ վիրտեղ դյուղացիք մոտ 2-3 ամիս իրենց վար ու ցանքում են դրադիում, մի յերկու ամիս հնձով կամ այլիներով և այն: Պատի լրագիրը իր բռվանդակությունը միշտ փոխելու յեն համապատասխան դյուղացիության և բանվորության զրազմունքին և զեկավարելու յեն նրանց աշխատանքները անմիջական կերպով ու տալու համապատասխան ցուցմունքներ և տեղեկություններ:

Նախքաղլուսվար Քացարյան

Քարտուղար՝ Գ. Հարությունյան

### ՇՐՋԱԲԵՐԱԿՈՆ Հ 65

ԲՈԼՈՐ ԳԱՎՔԱՂԼՈՒՄՎԱՐՆԵՐԻՆ ԲՈՂԱԳԻ ՅԵՎ  
ՀԱՐՑՄԱՆ ԱՐԿՂՆԵՐԻ ՄՋԱՒՆ

Գավքաղլուսվարները կուս. 13-րդ համագումարի վորոշումներն իրականացնելու համար խրձ.-ընթ. ու ակումբների առորյա աշխատանքներին այնպիսի բնույթ և ուղղություն են տալիս, վորպիսին հնարավորություն կտարանվորա-դյուղացիական հոծ մասսային խրձ.-ընթ. և ակումբների հետ կապելու, ինտենսիվ աշխատանք տանելու և իգեավիս զեկավարելու նրանց առորյա աշխատանքները. 13-րդ համագումարի վորոշմամբ, ամենալուրջ աշխատանքը խրձ.-ընթերցարանում նաև ակումբում պետք է համարվի տեղեկատու աշխատանքը: Այդ նպատակով պետք է կազմակերպել տեղեկատու բյուրո: Համագումարի վորոշումը կիրառելու համար անհրաժեշտ է անմիջապես ձեռնամուխ լինել տեղեկատու աշխատանքի կազմակերպման: Այդ նպատակով խրձ.-ընթ. և ակումբների աշքի ընկնող տեղերում անհրաժեշտ է կախել յերկու արկդ. գրանցից մեկի վրա գրված կիմսի պահել յերկու մյուսի վրա «հարցերի արկդ»: Հաճախորդակին մասնակի ընթացքում պետք է սովորեցնել: Թե ներին մասնակի ընթացքում պետք է սովորեցնել: Որ բնչպիսի բովանդակություն ունեցող գրեթյունները վիրելով լինել և այն բույր հարցաթերթիկների տակը պետք է զրված լինի հարց և բողոքաթերթիկների տակը պետք է զրված լինի հարցովովի անուն ազգանունը: Դրավոր կերպով տված հարցություններին կազմություններին կարելի է պատասխանել հաջորդ տեղին ու բողոքներին կարելի է պատասխանել հաջորդ պրոցեսում բարեկարգ գործությունների կամ ակումբների վարիչները տու խրձ.-ընթերցարանների կամ ակումբների վարիչները բացելու յեն և բոլոր հարցերը ցուցակ մտցնել արկդները բացելու յեն և բոլոր հարցերը ցուցակ մտցնել արշակունյան պահանջարության, անամսության:

բնական զիտելիքների, առողջապահության և այլնի շուրջը։ Յեթե կը գտնվեն այնպիսի հարցեր, վորոնց պատասխաննելը վարշության ուժերից վեր ե, այդպիսի հարցերի համար պետք ե դիմել համապատասխան մարմիններին և անհատ ներին։ Ըստհանրապես խրճ. —ընթ. և ակումբների վարիչները հաստատուն կազ են պահպանելու բոլոր հիմնարկների և կազմակերպությունների հետ ու նրանցից ստանալու համառոտ ինֆորմացիա և գյուղացուն. անհրաժեշտ տեղեկությունները։

Հարցերի պատասխանները պատրաստելուց հետո հարցերը (ովկողի անուն ազգանունով) և պատասխանները գրիրու յեն այդ նպատակով հատուկ տեղ կախված պատասխանի տախտակից վրա. Յեթե կը լինեն այնպիսի հարցեր, վորոնք վերաբերում են այս կամ այն անհատի ինտիմ կյանքին, պատասխանը պետք ե փակ տալ. Ըստհանրապես միշտ պետք ե հարմարվել գյուղացիների ցանկությանը և տեղի պայմաններին. ընդունելու ե նաև բանավոր հարցեր։

Խրճիթըն-թերցարանների և ակումբների վարիչները մեծ ուշգրություն են դարձնելու նամանավանդ բողոքների վրա. Բազոքները կարող են լինել յերկու ուղղությամբ-մեկ՝ ակումբի կամ խրճիթ-ընթերցարանի շուրջը, վորի ժամանակ հարցերը պետք դնել վարչության նստառում և միջոցներ ձեռնարկել խրճիթ-ընթերցարանի կամ ակումբի պահապնոր կողմէրը շակելու համար. Յեկրորդ տեսակի բողոքները ուղղված կլինեն այլ և այլ հիմնարկների կամ ակումբների վարիչները այդ հիմնարկների միջոցով պետք ապարգին գործը ու անպայմանորեն բողոքողին բավարպություն տան։

Համապատասխան հիմնարկների միջոցով պետք է լուծել նաև գանազան անհատների գեմ ուղղված բո-

Սակայն հայկական իրականության մեջ բանվորաց յուղացիական լայն մասսայի մի սավար մասը անգրագետ կամ կիսագրագետ ե և չի կարող զրագոր իր մտքերը ճշգրիտ կերպով արտահայտել։ Այդպիսիները անշուշտ կը դիմեն բանավոր կերպով, վորպիսի հանգամանքը առաջադրում ե խրճիթ-ընթերցարանում և ակումբում միշտ կարող անձնավորություն ունենալու պահանջը։

Յեթե խրճիթ-ընթերցարանների և ակումբների վարիչները ֆիզիքապես հնարավորություն չունեն այդ աշխատանքը կատարելու, պետք ե հերթապահություն մացնել աշխատանքի լծելով նայել վարչության անդամներին։

Բանավոր կերպով տված հարցերը նույնպես ցուցակագրվելու յեն ցուցակների մեջ ու զրկելու պատասխանի տախտակի վրա ընդհանուր ձեզով։

Նախքաղուսպիլիվար՝ Քաջախյան  
Քարտուղար՝ Հարաբեյունյան

### III. ՐԴ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՑԵՐՆՍՑՈՆԱԼԻ Ծ-ՐԴ-ՀԱՎԱԾԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ

Հունիսի 17-ից մինչեվ հուլիսի 8-ը Մոսկվայում տեղի ունեցավ III-րդ կոմմունիստական ինտերնացիոնալի Ծ-ՐԴ համաշխարհային կոնգրեսի նստաշրջանը։ Այդ համագումարն ելին յեկել աշխարհի բոլոր կողմերի կոմմունիստական կուսակցության ներկայացուցիչները, ներկայացուցիչներ կային 54 կուսակցություններից, կոմմունիստական ինտերնացիոնալի առաջին համագումարն ել սա առանց յուր հիմնադիր Վ. Ի. Լենինի. Բայց մեր հանգուցյալ մեծ ունիվերայի վոգին և ուսմունքը յեռանդայի կոնգրեսն անցավ մեծ վոգեորությամբ ու միունակամբ։

ՄԻԶԱՎՈՐԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԱՆՑԱԼ ԿՐԻՊ

Կռմմ ունիստական ինտերնացիոնալի բոլոր շարքերի  
համար այդ տարին խիստ և գառն կումի տարի յեր։

Ամենից ծանր եր Գեղմանական բանվոր գտառակարգի կարվը։ Գերմանիայի աշխատավորներն առաջուց ել տան- չվում եին թե իրենց և թե անդու—ֆրանսական բուր- ժվաղիայի կրկնակի լծից։ Գերմանիայից բաժանեցին նրա ամենահարուստ շըջանները։ Նրա յերկրի 10-րդ մասը, նրա ածալիի, յերկաթի, ցինկի մեծ մասը, իրենց սեփակա- նացրին նրա առևտրական նավատորմղի մեծ և լավա- գույն մասը, 5,000 շոգեշարժ մեքենաներ, 150,000 վա- գոն։ Ավերեցին և իրենց յերկիրը ապահ գործարաններ և զավողներ, զավթեցին 140,000 կով և մեծ քանակու- թյար գյուղանատեսական գործիքներ։ Անզիփացիները և ֆրանսիացիներն իրենց ձեռքը կենարանացրին գերմանիայի բոլոր գետերի նավագնացության վարչությունը և ելի շատ ուրիշ բան։ Իլրացումն այդ բոլորի իր պատերազմական ուռուքը ցանկանում են նրանից ստանալ մոտ 60 միլիոն ռուբլի վուկով (132 միլիոնդ գերմանական մասեւ)։

Առանց վերջնականորեն քարուքանդ լինելու՝ ավերված յերկրը չի կարող կատարել այս բոլոր պահանջները։ Այդ պահառով ել հաղթողները ստիպված են անդադար փորձնել այնպիսի միջոցներ, զորոնք ստիպեն Գերմանիային վճարել յուր վրա դրված պարտքը։ Նա պարտավոր է ֆրանսիացիներին տալ անհավատալի քանակությամբ ածուխ, նա հաղթողներին վճարում է արտասահման արտադրվող յուր բոլոր ապրանքների արժեքի  $\frac{1}{4}$ -ը ( $26\%$ )։ Ից ավելի, նրա ժողովրդական տնտեսությամբ հաղթողների վերահսկողությանն է յենթարկված։ Ժողովրդական տնտեսության գլխավոր ձյուղերը՝ յերկաթուղթին գտնվում են հաղթողների զեկավարության ներքաւ։ Վերջապես ահա կես ( $\frac{1}{2}$ ) տարի յեւ, ֆրանսիական

բութվազիան գերմանիայից տնջատել և իրը գրավական՝  
Ռուսի շրջանը, նրա արդյունաբերության ոմենակարե-  
փոր մասը:

Այդպիսի հեգնանքի կյենթարկվելինք և մենք, յեթե  
քաղաքացիական կովում մենք եւ պարտվելինք:

Հասկանալի յէ, զոր գերմանական բուրժվագիան ոգ-  
տվում և յուր ձեռքում գտնված ամբողջ իշխանությու-  
նից, փորպեսզի ավերված յերկրի բոլոր ծանրությունները  
ընկնեն աշխատավորության՝ առաջին հերթին բանվորնե-  
րի ուսախն։ Անցյալ տարվա ընթացքում գերմանական  
բանվորները բուրժվագիայի գեմ մղեցին հերոսական և  
ծանր կոփի, փորը հասնում եր բացարձակ ապստամբու-  
թյունների։ Մի ժամանակ, անցյալ տարվա աշնանը բան-  
վոր դասակարգն արդեն հասնում եր վերջին և վըճ-  
ռական կոմին։ Բայց բանվօր դասակարգի անպատճառատա-  
կանությունը և զեկավարների մի քանի սխաները թույլ  
չտվին գերմանական բանվորներին վերջնական մահացու-  
հարված իջեցնել բուրժվագիայի զիսին։

Այս բոլորի հետ միասին գերազական բուրժուական դիմումներին, պիան ամեն կերպ հետազոտում և կոմմունիստներին, արգելվում են կոմմունիստական ժողովներ, լրագիրներ և գրքեր, ձերբակալում են կոմմունիստներին և գիտական փորձը, սպառագության սպառնում կամ մերձ իմահ ծեծում են: Կից բանսփորներին սպառնում կամ մերձ իմահ ծեծում են:

Յուր զոտիկանությունը բուրժվաղիան ստեղծել է սրիկա-  
համար՝ գերմանական բուրժվաղիան ստեղծել է սրիկա-  
ների հատուկ խմբեր, զորոնք առանց պատժի յենթարկվե-  
լու, ճեղնում են բանվորներին:

Զանած այս բոլորին՝ գերմանիայի բանվոր դաստիարակն ուղեցը ավելի և ավելի յե հետեւամ կոմմունիստ-ներին. Գերմանական պարլամենտի վերջին ընտրություններին գերմանիայի կոմմունիստները ստացան մոտ 3 ու կեռ միլիոն ձայն. Այս ավելի ևս կատաղեցրեց բուրժվազիային և հիմա հետապնդութեարի նոր տարափ և թափախ կոմ-

մունիստական կուսակցության ու բանվոր դասակարգելու հիմքն:

### ԿՈՒՎ ԲՈԼՂԱՐԻԱՅՈՒՄ

Վոչ պակաս ծանր կռվի բռնվեցին Բոլղարիայի բանվորները և գյուղացիները: Անցյալ տարվա ամառվանից Բոլղարիայում հաստատվեց բոլղարիայի խոշոր կարգածատերների և զինվորականների դիկտատուրան: Բոլղարիայի գյուղացիները և բանվորները փորձեցին դեն շպրաել այդ իշխանությունը: Բայց բանվորների և գյուղացիների առամբաւթյունը ջաղջախվեց և արյունով վողողվեց: Այդ ժամանակ ապստամբությունը զսպողների և դահիճների շարքերում կային ոռւս սպիտակ գվարդիականները: Մինչեւ հիմա ել Բոլղարիայում ապրում են զորապետ Վրանգելի բանակի մացորդները, մեծ մասամբ այս բանակի սպայությունը: Հազարավոր գյուղացիներ և բանվորներ մահվան դատապարտվեցին, հազարներով տառապում են բանտերում: Կոմմունիստները քշված և գաղտնի գործներության են մատնված: Բայց և այնպես գյուղացիների և բանվորների կոիվը մինչեւ որս ել չի դադարում:

### ԼԵԳԱՍՅԱՆ, ՌՈՒՄԻՆԻԱ, ՅԵՎ ՈՒՐԻԾ ՅԵՐԿՐՆԵՐ

Բոլոր յերկրներում կոմմունիստների և աշխատավորների, վորոնք համարձակվում են վոչ թե ձեռք բարձրացնել բուրժվագիշայի վրա, այլ իրենց իրական ձայնը ստանալ: Կոմմունիստների նկատմամբ հետապնդումներ և սանձարձակ բռնութուններ են թագավորում: Մեր հարեւան Ռումինիայում և Լեհաստանում արդ հականեղափոխական սանձարձակության արշավանքը ստոր է և դաժան: Կոմմունիստներին, գիտակից բանվորներին, գյուղացիներին բացարձակ կերպով մերձիման ծեծում, գնդականարում, կախում են: Դեռ մոտիկ անցյալում լեհական պատկոմների, յերիասարդ տղաների, համարյա յերեխաների գաղանարար մահվան դատապարտման լուրն ամբողջ աշխարհ գղրգե-

ցրեց: Գյուղացիները և բանվորները շատ անդամ են բաց կովով գուրս յեկել պարոն կալվածատերների դեմ: Անցյալ տարի աշնանը կրակովում տուաջ յեկավ ապստամբություն, ժամանակ ժամանական մեկ հեծելագունդ անցավ ավորի ժամանակ լեհական մեկ հեծելագունդ անցավ ապստամբությունը: Վարօն կալվածատերները կրակով և արյունով զսպեցին այդ ապստամբությունը:

Լեհական պաների և ուումբնական իշխանների ձնշումն ավելի ուժեղ եր այդ պետությունների վոչ լեհ վոչ ուումին բնակիչների համար: Չե վոր լեհաստանում բնակության կիսից քիչ պակաս ուստար յերկրացիներ են: Խուս և բելառուս գյուղացիների ու բանվորների գրությունն ավելի շատ ծանր և հատկապես այն հոգամասներում, վուավելի շատ ծանր և հատկապես այն հոգամասներում ժամանակ անցան լեհաստանին: Այս տեղերում արգելվում է ուստական և բելառուսներ լեզուներով արգելվում ուստական լրագրությանը: Այս լեզուներով արգելվում է լրագրուներ և գրքեր տպել, թույլ չեն տպին հիմնել գաղափառ և բելառուսական դպրոցներ: Մինչեւ անդամ ուստական և բելառուսական դպրոցների փոխարեն առաջ փակում են յեկեղեցիներ, քահանաների փոխարեն առաջ գալիս կաթոլիկ հոգեվորականներ, մի խոսքով՝ բոլոր վոչ լեհացիներին աշխատում են ուժով լեհացնել կամ թե իրենց յերկրից հալածելով հեռացնել:

Ճնշումների և բռնությունների այսպիսի պատկեր և թագավորում Արևմտյան Յեվրոպայի յերկրների մեծ մասի աշխատավորների վրա:

### ՖԱՇԻԶՄԸ ՅԵՎ Հ-ՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

Իս ալիայում բուրժվագիշան աշխատավորության գետ կռվելու համար՝ կազմակերպել ե իրեն ոգնող հատուկ ջոկատներ, վարոնք կոչվում են ֆաշիստներ: Արևելստական և բանվորական միությունները ցրվում են, կողապտում են նրանց բնակավայրերը և կործանվում, արգելում և սպառառում են բանվորական լրագիրները: Պրոլետարական միությունների առաջնորդներին, կոմմու-

Նիստներին մերձ ի մահ ծեծում են կամ թե պարզապես մութ անկյուններում սպանում են։ Մի խոսքով՝ 1905 թվի ցարական վոստիկանության կազմակերպած խայտառակ հիշողության սև հարյուրակը ներկայումս դժնվում է Յեղուայի մի շարք զլիսափոր յերկրներում։ Գերմանիայում Լեհաստանում, Վենգրիայում, Իսպանիայում և Նույնիսկ Ամերիկայում, վորովհետև այս յերկրների բուրժվազիան շտապեց ընդորինակել խտալական բուրժվազիայի այդ «գյուտը»։

Բայց չնայած այս բոլորին՝ բոլոր յերկրներում բանվոր դասակարգի կորիվն անդադար ուժեղանում եւ Յեղ ներկայումս բուրժվազիան ավելի և ավելի համոզվում է, վոր այլ ևս բացարձակ ճնշումով նա չի կարող իր գոյությունը պահպանել։ Յեղ նա մի շարք յերկրներում ֆաշիստներին իր գրպանում թաքցնելով՝ նորանոր փորձեր և անում աշխատավորությանը նորից հիմարացնելու հոմար։ Այս բանում նրան գործունյա ոգնությունն եցուց տալիս Հ-րդ ինտերնացիոնալը։

Այսուղ նշանափոր գեր և խաղում հատկապես անդիմական բուրժվազիայի բաղաքականությունը։

### ԴՐՈՒՅՑՈՒՆՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Անգլիական բուրժվազիայի յերկու սասերի միջև տեղի ունեցած պայքարը մի կողմից, և անգլիական բանվոր դասակարգի կորիվը մյուս կողմից ստիպեցին անգլիական բուրժվազիային համաձայնվել, վոր թույլ տրվի Հ-րդ ինտերնացիոնալի համաձայնականներին մանելու իշխանության կազմը\*։ Այս համաձայնականների գլուխ է

**Ֆանոր.** Ներկայիս այդ կառավարությունն արդեն չկա և պահպանողականները քշելով Մակդոնալդին իրենք են իշխում։

Կանգնած Անգլիայի նախկին զլիսափոր նախարար Մակդոնալդը, Այս կառավարությունն իրեն համարում և բանվորական կառավարություն, բայց գործնականապես

նա անգլիական բուրժվազիայի կառավարությունն եւ Անգլիական բուրժվազիան ի զուր չի պաշտպանում այդ կառավարությունը։ Այդ Մակդոնալդը՝ իրեն բանվորական ուսմարողը, և իրենց բանվորական նախարարների տեղ դնող նախարարները վոչ թե գահընկեց չեն անում անգլիական թագավորին, այլ և դեռ իրենք են նրա ձեռքերը համբուրում։ Նրանք նույնպես չեն կովում անգլիական խոշոր կալվածատերների և բուրժվազիայի, ազնվականների ու լորդերի գեմ։ Ինչպես վոր նրանցից առաջ այնպես ել հիմա շարունակվում ե Անգլիայի իշխանության յենթակա Հնդկաստանի և ուրիշ վայրերի ժողովուրդների ճնշումը։ Պատերազմական ծալքաբերը հետզհետե մեծանում են. շինվում են նոր զրահավոր շոգենավեր, պատերազմական սավառնակներ, պատրաստվում են թունավոր գազեր, ուրիշ նորանոր միջոցներ համաշխարհային նոր պատերազմի համար՝ ի սեր անգլիական բուրժվազիայի շահերի և արևելյան թույլ ժողովրդների սարկացման։

Առաջիկ պես ելի Անգլիան Թրանսիայի հետ միասին ճնշում ե Գերմանիային։

Այս, իբր թե բանվորական կառավարությունը խորհրդական իշխանության հետ տարած բանակցությունների ժամանակ պաշտպանում եր անգլիական բուրժվազիայի շահերը և պահանջում մեզնից կայսերական պարտքերի վճարում։ Ներկայումս ել անգլիական շատ բանվորներ գերաւում են այդ կառավարությանը։ Բայց այս ինքնախարեռնը շուտով կը փարատիի։ Անգլիական կուսակցությունը դեռ յերիտասարդ է կոմմունիստական կուսակցությունը դեռ յերիտասարդ է քանակով փոքր, բայց որավուր ուժեղանում ե և հրապարակում անգլիայի բանվոր դասակարգի աշքի առաջ անգլիայի «բանվորական» կառավարության յերեսպաշտությունը։

## ՄԻՋԱՋԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1919-1920 թվերին, յերբ արևմուտքի բոլոր յերկրներում բանվոր դասակարգը ճշնեց գեն շպրտել բուրժվագիային, կապիտալի իշխանությունը համառ կերպով դիմադրություն ցույց տվեց: Ներկայումս առաջին հայացքից թվում ե, թե կապիտալը բավական ամրացել է: Այս ամրացումը միայն ժամանակավոր է, կարող ե պատահել, վոր կապիտալի իշխանությունը տես ելի մի քանի տարի, գուցե ամբողջ տասնյակ տարիներ, բայց այդ իշխանության զիսավոր հիմունքները, արժանիքն արդեն մաշվել և ուժաւալառ են դարձել: Տնտեսական զրությունը Յեփրադական յերկրներում անցյալ տարվա ընթացքում մի քիչ բարեկավել է, բայց վոչ մի յերկրում բուրժվագիան չը կարողացավ պատերազմից քայլացված տնտեսությունը վերականգնել, ավելի ևս ժողովրդական տնտեսությունը բարձրացնել: Բոլոր յերկրներում ժողովրդական տնտեսությունը կորցրել ե ամեն տեսակի կայունություն: Ավելի պարզ այս յերեսում ե այն բանից, վոր վոչ մի յերկրում կայուն փող գոյություն չունի: Մինչև անդամ այնպիսի յերկրում, ինչպիս Ֆրանսիան ե, վորի բուրժվագիան իրը պատերազմական տուրք Գերմանիայից թալանում, զավթում ե ամրող շրջաններ, քարածուխ, հանք, վոսկի ամեն տարի անհայտատլի քանակությունից միլիոններ, նույն իսկ այդ Ֆրանսիայում ժոմանակ առ ժամանակ ընկնում են տեղական դրամների արժեքները՝ առաջ բերելով ընդհանուր խռովապ:

### ՆՈՐ ՊԱՏԵՐՍՉԱՇԽԵՐԻ ՎՏԱՆԳԸ

Համաշխարհային պատերազմի աճող վտանգից դրության այս անկայունությունն ավելի ևս սաստկանում է: Անցյալ պատերազմում հաղթող բուրժվագիան ամբողջ աշխարհն այնպիս բաժանեցիր մեջ, վոր առաջ բերեց նոր պատերազմի համար տասնյակ պատճառներ:

Հաղթողները թալանեցին, հոշոտեցին Գերմանիային ու Ավստրիային և շարունակում են հավատակել հոշոտել ի թալանել նըանց հիմա ել: Պարտված Գերմանիայի բնակչության մեջ թշնամություն ե աճում զեպի Ֆրանսիական և Անգլիական ամրող ժողովուրդը: Առաջին հնարական և Անգլիական ամրող ժողովուրդը: Առաջին հնարագոր զեպը ուժամանիան կճնի թոթափել իր ուսերից ստարի ծանր լուծը: Ֆրանսիայի բուրժվագիան հասկանում է այս և վախենում է սրանից: Գրա համար ել նա ցանկանում ե բոլորովին ձիւել Գերմանիային: Բայց չե վոր ամենահառաջարկել յերկրներից մեկը 60 միլիոն զիսկայական կուլտուրական բնակչության հետ վոչնչացնելն անկարելի յեւ:

Հաղթողները ստեղծեցին մի քանի նոր պետություններ՝ Լեհաստան, Չեխո-Սլովակյա, Հարավային Սլավյան պետությունները, Բայց ուրիշները, վերաբաժանեցին հին պետությունների: Բայց սահմանների վերաբաժանման զեպը նրանք հաշվի չառան վոչ ազգությունը և վոչ ել ազգաբնակչության կամքը, այլ ի նկատի ունեցան միայն իրենց ցանկությունը և այլ պատճառով ել նոր ստեղծված պետությունները: Այդ պատճառով ել նոր ստեղծված պետությունների մղած ների ներսում չի գագարում ճնշվող ժողովրդների մղած կոփը բուրժվա տիրող ազգության զեմ:

Նախկին գաղնակիցների մեջ յերկրների բաժանման պատճառով զարգանում են վեճերը Յապոնիայի և Հյուսիսային Ամերիկայի միջև, չնայած վոր յերկուսն ել կըսվում եյին Գերմանիայի գեմ, գործն այն տեղը հասավ, վոր Հյուսիսային Ամերիկական Միացյալ Նահանգներն արգելեցին յապոնացիների մուտքն Ամերիկա:

Անգլիայի և Ֆրանսիայի միջև ուժեղանում է փոխպարձ թշնամություն Գերմանիայի, Տաճկաստանի թալանի վերջինից շահ դուրս կորպելու համար: Այս տարի Տաճկաստանի և Իտալիայի միջև մեկ անգամ գործն արգելն ձեծի հասավ, Տաճկաստանի և Հունաստանի միջև կոփը հաղիկ հազ վերջացավ: Անցյալ տարի, քիչ առաջ Իտալիայի

և Հունաստանի միջի քիչ եր մնում գործը պատերազմի համեր: Առևյուղ տեղի ունեցավ Խտալիայի և Հարավ Սլավիայի հետ ճիշտ նույն վիճակի մեջ և գտնվում էի հաստանի Գերմանիայի և Լիտվայի հետ ունեցած փոխհարթերությունների գործը:

Նոր պատերազմի հանդույցները կապված են բարձր շափով:

ՆՈՐ ԶԻՆՈՒՄՆԵՐ

Բոլոր յերկրներում բուրժվագիան շտապողականությամբ նոր պատերազմի պատրաստություն ե տեսնում. պատրաստում են տամնյակ հազար սափառնակներ, ներմուծվում են նոր գնդացիրներ, տանկաներ, զենքեր, նոր զինամթերքներ։ Շարունակ ներմուծվում են նորանոր, թունավոր գազեր, ամեն տեսակի խեղդիչ, կուրացնող, այրող, պայթուցիկ ճառագայթներ և այլն։ Մութ անցյալում դաշնակիցների շտաբները մշակեցին իրար վրա հարձակվելու նոր ծրագրներ. Անզին մշակում ե ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզի վրա հարձակվելու ծրագիրը, դրա փոխարեն վերջինիս շտաբները մշակում են Լոնդոնի վրա ողացին հարձակման ծրագրու:

Նոր պատերազմների վտանգն ընդմիշտ կանհետանամիայն բուրժվաղիայի վերջուական ջնջումով ամբողջ աշխարհի լերեսից:

ԱՅԻՎԵԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՎ ԱՅՈՒՆ ԿՈԲՈՀԱՌԻ Կ

Կոմինտերնի կոնգրեսը մանրամասն քննեց միջազգային դրությունը, անցյալ տարվա դասերը, առանձին կուսակցությունների սխալները և կանխորոշեց իր ուղին։ Մանրամասն քննության յենթարկելով յուրաքանչյուր յերկրի դրությունը՝ կոնգրեսը ցույց տվեց յեղբայրական կօմունիստական կուսակցությանը նրա հառաջիկա խրնդիրները և նրանց իրազրծման ճանապարհը։ Նա նորից և նորից ցույց տվեց բոլոր կառավարություններին, թե

ինչպես խոր և խորը են թափանցել աշխատավորության ամենալայն խավերը (զանգվածները), կոմկուսը ինչպես գրավելենքանց վատահությունը, մինչև վերջը մերկացնել համաձայնականներին և կազմակերպել, միացնել յուրաքանչյուր յերկրի գյուղացիությունը և բանվոր գառակարգին բուրժուազիայի դեմ պայքարելու համար։ Այս կոնգրեսը բոլոր յերկրների բանվոր գառակարգի և գյուղացիության յեղբայրական մի միության խնդիրն առաջադրեց, փրապես ամենահիմնական խնդիրներից մեկը։ Սրա հետ գուգընթացքար առաջ յեկավ արևմուտքի առաջապահ բանվորների և գյուղացիության բուրժուազիայի շահագործվող գաղութային յերկրների մեջված ժողովրդների միության անհրաժեշտությունը։

Կոնգրեսն առանձնապես մանրամասն քննության առավ բոլոր յերկրների զյուղացիության դրությունը՝ կոնգրեսը մատնանշեց բոլոր կուսակցություններին, վոր անհրաժեշտ և հատուկ ուշադրություն դարձնել նոր պատերազմի վասնպի գեմ կովկելու գործի վրա:

Միայն բուքժվագիալի գեմ լարված, անդադար կը-  
սկսե իտուող է կանխել նոր պատերազմը:

Սրա հետ միասին կոնգրեսը մատնանշեց, վոր Ա. Խ. Հ. Մ. և մեր քաջարի Կարմիր բանակն է խաղաղության ամենազօր հենակետը։ Վորքան վոր ամբակուռ և ուժեղ կը լինի Կարմիր բանակը, այնքան աննշան կը լինի համաշխարհային պատերազմի վտանգը։

կոնգրեսը նույնպես քննեց Ռ. Կ. Կ.-ի գործունեությունը և լիովին հավանություն տվեց հատկապես շեշտելով, թե ինչպես ժողովրդական անտեսության վերականգնման գործում շատ բանի յե հասել Ա. Խ. Հ. Մ. Ա.

Կոնգրեսը վերջացավ կոմոնիստական խոտերնացիոնալի նոր գործադիր կոմիտեյի միաձայն ընտրությունով: Քարձյալ կոմինտերնի նախագահն ե ընտրված ընկ. Զինվորական Ս. Խ. Հ. Պ.-ից Գործկոմի կազմի մեջ մտան

Զինովյելը, Ստալինը, Բուխարինը, Ռիկովը, Կամենեվը, թեկնածուներ են. Տրոցկին, Սոկոլնիկովը, Ֆրանգեն: Կոմիտերնի Գործկոմը — Միջազգային Հեղափոխության շտաբը գտնվելու յե Մոսկվայում:

### Ի՞ՆՉ Ե ԿՈՄՊԻՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

III Կոմմոնիստական ինտերնացիոնալ նշանակուժ աշխարհի բոլոր յերկրների կոմմոնիստական կուսակցության միությունը՝ Այդ միությունը հիմնվել է Վլադիմեր Իլյիչի ջանքով: Կոմմոնիստական ինտերնացիոնալի առաջին կոնգրեսը (համագումարը) տեղի ունեցավ 1919 թվի մարտին Մոսկվայում: Յերկրորդ կոնգրեսը՝ 1920 թվի ամառը, նիստերը տեղի ելին ունենում մասամբ Մոսկվայում, մասամբ Լենինգրադում (այն ժամանակ դեռ Պետրոգրադում): Յերրորդ կոնգրեսը տեղի ունեցավ 1921 թվի ամառը Մոսկվայում, 4-րդ կոնգրեսը տեղի ունեցավ 1922 թվի աշնանը (խորհրդային իշխանության 5-րդ տարեդարձին) Մոսկվայում: Սա վերջին կոնգրեսն եր, վոր տեղի ունեցավ Վլադիմիր Իլյիչ Լենինի մասնակցությամբ և ղեկավարությամբ:

«Ինտերնացիոնալ» խոսքը հայերեն նշանակում է մի չափային միություն: Գերանական յերկու խոսքից՝ ինտեր — մեջ, և նացիոնալ — ազգային:

### Ի՞ՆՉՈՒ ՄԵՐ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ ԿՈՉՎՈՒՄ Ե ԿՈՄՊՈՆԻՆԻՍՏԱԿԱՆ

Մեր ինտերնացիոնալը կոմմոնիստական է կոչվում նրա համար, վոր այս միության մեջ մտնում են Կոմմոնիստական կուսակցությունները: Այրիշ խոսքով նրա համար, վոր ամբողջ այս միությունը և յուրաքանչյուր յերկրի կոմմոնիստական կուսակցությունը պայքարում են տապալելու բուրժուական իշխանությունը և ամբողջ աշխարհում հաստատելու աշխատանքի թագավորությունը: Հաճախ կոմմոնիստական ինտերնացիոնալը կոչում են

կրծատ, կոմիտերն: (Կոմմոնիստական ինտերնացիոնալ — միացնում են խոսքերի ընդգծված յերկու մասերը՝ դարձնելով մեկ խոսք):

### Ի՞ՆՉՈՒ ԿՈՄՊՈՆԻՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ ԿՈՉՎՈՒՄ Ե ՅԵՐՐՈՐԴ

#### ԱՌԱՋԻՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Այս ինտերնացիոնալը յերրորդ է կոչվում նրա համար, վոր արդեն յերրորդ անգամ բոլոր յերկրների բանվորները բուրժուազիայի դեմ պայքարի գեղարդում փոխադարձ նեցուկ լինելու համար՝ կազմակերպում են այսպիսի միություն:

Առաջին անգամ այսպիսի միություն կազմակերպվեց 60 տարի որանից առաջ՝ 1864 թվին արևմտյան Յերվագալի բոլոր յերկրների բանվորների ներկայացուցիչների մասնակցությամբ, բոլոր աշխատավորների ուսուցիչ Կարլ Մարքսի գաղափարով: Այս միությունը գոյացուցիչ ունեցավ 10 տարի և բայց յեղանքեց Փարիզյան Կոմմոնիստիք\*) պարտությունից հետո՝ գլխավոր տուժամբ նրա համար, վոր բոլոր յերկրների բանվորական շարժումը դեռ շատ թոյլ եր:

\*) Փարիզյան Կոմմոնիստիք Այսպիսս եր կոչվում այն ժամանակա ֆրանսիական բուրժուազիայի իշխանությունը տապալող Փարիզի աշխատավորների 1871 թվին հաստատվ իշխանությունը: Փարիզյան կոմմոնիստները ներկա կոմմոնիստների նախնիքներն են: Ֆրանսիական բուրժուազիայի կովից յերկու ամիս (72 օր) հետո՝ նրան հաջողից ամբակոծել Փարիզը և վոշնչացնել Կոմմոնիստիք իշխանությունը: 30,000-ից ավելի փարիզյան բանվորներ գնդականարվեցին, բանտերում փակվեցին և վտարվեցին աքորու Կենցանի մեացած փարիզյան կոմմոնիստները կիրակի հունիսի 6-ին 1924 թ. Թուստատանի կոմունիստական Կոմմոնիստակցությունը հանձնացին իրենց զրոշակը, վորը նրանք պահել ելին 50 տարուց ավելի: Հիսա այդ զրոշակը պահվում է Վանդիմիր Իլյիչ Լենինի գերեզմանի մոտ:

## ՅԵՐԿՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Յերկրորդ անգամ այսպիսի միություն կազմակերպեցին բոլոր յերկրների բանվորները 1889 թվին՝ 34 տարի սրանից առաջ: Նա կոչվեց յերկրորդ ինտերնացիոնալ-Այս միությունն իր գործունեության սկզբին շատ բան արեց բոլոր յերկրների բանվորների կազմակերպության և միության համար: Մայիսի մեկի աշխատանքի մեծամասնության հաստատվեց այս միության կողմից: Բայց պատերազմից առաջ վերջին տարիները յերկրորդ ինտերնացիոնալի ուսհմիրաներից շատերը բուրժվագիտայի դեմ կըռվելու փոխարեն՝ բուրժվագիտայի հետ համաձայնության դալու և նրան նեցուկ դառնալու ձանալարնը բանեցին (այստեղից առաջ յեկավ «համաձայնողականներ» խոսքը, կամ սատր լեզվով՝ «ոպպորտյունիստներ»): Յերբ 1914 թվին բուրժվագիտն սկսեց պատերազմը, համաձայնականները՝ յերկրորդ ինտերնացիոնալի ուսհմիրաները բացարձակ կերպով դաշտանեցին բանվոր դասակարգին, բացարձակաբար անցան բուրժվագիտայի կողմը և փոխանակ պատերազմի դեմ կովելու՝ սկսեցին սղնել բուրժվագիտային պատերազմն առաջ տանել և նույնիսկ հանգտացնել բանվորներին: Դեկավարների դաշտանության պատճառով բոլոր յերկրների բանվորների միությունը քայլայվեց:

Յերկրորդ ինտերնացիոնալի մեջ պատերազմից առաջ կար համաձայնականների դեմ կովող ուսհմիրաների և զեկավարների մեկ փոքր խմբակ: Այս խմբակի գլուխ եյին կանգնած էնենինը, Կարլ Լիբկնեխտը, Ռոզա Լյուկսեմբուրգը և մի քանի ուրիշները: Յերկրորդ ինտերնացիոնալից դեկավարների մեկ մասի դաշտանությունից հետո՝ դեռ պատերազմի սկզբից Վազիմիր Ռյլիշ Լենինն առաջացրեց բոլոր յերկրների նոր, յերրորդ միության միությը՝ բուրժվագիտայի դեմ կովելու համար—յերրորդ ին-

տերնացիոնալը: Ծանր ու յերկարատե կռվից հետո՝ մեծ ուսհմիրայի այդ մեծ միաքն իրականացավ: 1919 թվի մայիսին Մոսկվայում հիմնվեց III Կոմունիստական ինտերնացիոնալը:

## ՅԵՐԿՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏI

Պատերազմի վերջանալուց հետո 2-րդ ինտերնացիոնալի զեկավարները բանվոր դասակարգի դաշտանաները III ինտերնացիոնալի դեմ կովելու նպատակով, նորից իրենց հայտարարեցին 2-րդ ինտերնացիոնալի կողմանիցներ ցուց տալով, վոր իրը թե նրանք վերականգնում են 34 տարի սրանից առաջ հիմնված բոլոր յերկրների բանվորությունների միությունը<sup>\*)</sup>: Ագավելով բուրժվաների բուրժվագիտական լրագրներից, իսկ շատ յերկրներում նույնիսկ իշխանությունից, քանի վոր այդ մարդկանց բուրժվագիտան հիմա համարում ե իր կողմնակիցները, այս դաշտանաներին դեռ հաջողվում ե խարել բանվորների փորոշ մասին: Այս ավելի հեշտ հաջողվում ե նրանց նրանով, վոր բուրժվագիտայի հետ խաղաղացներով բանվորների և գյուղացիների խոսվարարությունները, այդ դաշտանաներն ոգնում են նրան կոմմունիստներին սպանել և բանտերում արգելել, նրանք սպավում են այն բանից, վոր կոմմունիստները քշվում են գաղանի աշխատանքի, վոր կոմմունիստական լրագրները արգելվում են, ցրվում են նրանց ժողովները:

Բայց աշխատավորներն արգեն սկսում են պարզ ըմբռնել այդ մարդկանց իսկական եյությունը, վորոնք իրենց համարում ելին բանվորների բարերարները, և այդ աշխատավորներն անցնում են կոմմունիստների կողմը՝ ինկատի շունենալով բանտերը, անգործության փորձանքը և նույն իսկ մահը, վորը կապված է սրանց հետ:

<sup>\*)</sup> Այդ պատճառով լրագրերում 2-րդ ինտերնացիոնալը համարում են նույնպես գեղին ինտերնացիոնալ այն և՝ դաշտանական մատնիչ ինտերնացիոնալ:

Ի՞նչ Ե ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԵՆԱՎԱՃԱՌԸ ՅԵՎ ԻՆՉՊԻՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՈՒՆԻ ԳՅՈՒՂԱՑՈՒ ՀԱՄԱՐ

## Ի՞նչ Ե ՄԵՆԱՎԱՃԱՌԸ ՅԵՎ Ի՞նՉՈՒ ՆԱ ԱՆՀՐԱԺԵԾ Ե

Արտաքին առեարի պետական մենավաճառի ժամանակ պետությունն արտասահմանի հետ ունեցած իր ամբողջ առեառուրը, ինչպես առլրանքների արտահանումը, այնպես և ներմուծումը պահում և իր ձեռքում:

Խորհրդային իշխանությունը չեր կարող թույլ տալ ամեն մի սպեկուլարանտի ազատ առեառուր անել արտասահմանի հետ: Պատերազմից և հեղափոխությունից հետո մենք շատ աղքատ յերեացինք: Ամեն բանից ել մենք քիչ ունենք: Տնտեսությունը քայլայված է, Առար պետությունները մեղնից շատ հարուստ են: Յեթե Խորհրդային իշխանությունն իր ձեռքը չառներ արտաքին առեառուրը, այլ թողներ նրան ազատ, այն ժամանակ ոտարյերկրյա կապիտալիստները խորհրդային հանրապետությունից շատ չնչին գնով արտգ գուրս կը հանեյին նրա առանց այն ելքիչ փոսկու և ապրանքային պաշարները: Յեթե յուրաքանչյուր առեառական կամ նեղման կարողանար առեառուր անել այնպես, ինչպես իրեն և հարկավոր և ում հետ ինքն և ցանկանում հոգալով միայն իր շահերը, այն ժամանակ ժողովրդական շատ հարստություններ զանազան շուկաներում ծախծիված կը լինեյին, և արտասահմանից մենք կտանայինք ամեն տեսակ փրթած, անպետք ապրանք: Մենք ավելի կազքատանայինք՝ քայլայումը կափելանար:

Խորհրդային իշխանությունն ասաց. մենք չենք կարող համաձայնվել այն բանին, վորպեսզի յուրաքանչյուրն արտահաներ և ներմուծեր արտասահմանից այն, ինչ վոր ինքը ցանկանում եւ Մեր աղքատությունը և քայլայումը պահանջում եւ ամենախիստ խնայողություն: Ի հարկե,

մենք պետք եւ ապրանքներ արտահանենք գեղի արտասահման, բայց այնպես, վոր գրանից մեր անտեսությունը ձեզքվածք չտանա: Մենք պետք եւ ներմուծենք միայն այն, ինչ վոր ծայրահեղ անհրաժեշտ եւ յերկրին, վորպեսզի կարողանանք ապրել և բարձրացնել անտեսությունը: Իսկ ավ կարող եւ այդպիսի զգուշությամբ գործել. Միայն ինքը՝ պետությունը, մեր բանվորագյուղացիական իշխանությունը: Մենավաճառության ժամանակ արտասահմանյան վաճառականներին չափազանց դժվար և փոփոխել մեր ապրանքների գները, քանի վոր նրանց առաջ կանգնած եւ մեկ առեարական: Պետական իշխանությունը, և վոչ թե մթմիանց գեմ մրցող բազմաթիվ առեթյունը, և վոչ թե մթմիանց գեմ մրցող բազմաթիվ առեթյունը: Սրանից ել բղիսեց մենավաճառության անարականներ: Սրանից ել բղիսեց մենավաճառության անարականներ:

## ՀԱՅԻ ՅԵՎ ՀՈՒՄ ՆՅՈՒԹԻ ԱՐՏԱՎԱՀՄԱՆ ԱՐՏԱՀԱՆԵԼԸ

Ահա թե ինչ: Իր տնտեսության բարելավման և զարգացման համար գյուղացիության անհրաժեշտ եւ զարգացման համար գյուղացիության անհրաժեշտ է զարգի և ուրիշ մթերքների արտահանումը: Սա խորհրդանային կտերքների մթերքների ներսում բարձրացնում է յին հանրապետությունների ներսում և Խորհրդային Միության հացի գները անբանդում և Խորհրդային ամբողջ անտեսությունը:

Մենավաճառության չնորհիվ թե ներքին և թե ոտարյերկրյա բոլոր սպեկուլյանուներին կեղեքողներին հասցի արտահանության ասպարեզից հեռացնելով պետությունը նպաստում և արտահանման ամենալավ և ավելի ճիշտ կազմակերպմանը՝ աշխատելով վորպեսզի ավելի ճիշտ կազմակերպմանը, վորպեսզի առեարից գյուղացիներին, վորպեսզի առեարից գյուղացին ստանա ամենամեծ ոգուտը: Ընդհակառակը կլինի, յեթե արտահանեյին մասնավոր անձնավորությունները կապիտալիստները, նրանք կաշխատեյին, գյուղացուն տալ ավելի քիչ, վորպեսզի իրենք ավելի շատ շահեյին:

## ԱՐՏԱՍՏԱՆԻՑ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒՄՈՒՄԸ

Բայց պետությունը վոչ թե միայն արտահանում և պյուղական հացը: Նա շահված փողերով նաև ներմուծում է (արտասահմանից) ապրանքներ: Յեզ այս ել նա դործում է խելքով՝ գյուղացիների շահերի համաձայն: Նա արտասահմանում գնում է այն, ինչ վոր գյուղացուն անհրաժեշտ է իր գործնեության համար՝ այն մեքենաները և գործիքները, վորոնց հարկավոր քանակությամբ մեր գործարանները չեն պատաստում: Արտասահմանում հանգես գալով վորովես միակ գնողը՝ նա կարող է այնտեղ ավելի եժան գնել, վոր նույնակես գյուղացուն ոգուտ է: Ի լրումն այս բանի՝ պետությունը թույլ է տալիս գյուղատնտեսական բարդ մեքենաների, ոերմերի, պարարտոցման նյութերի, վնասառուների դեմ պարբերի միջների առանց մաքսի ներմուծումը:

## ՆԵՐԳԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՄԵՆԱՎԱՀԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԺԱՂՈՎՐԴԱԿԱՆ ՑՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ներքին առևտրի մենավաճառության շնորհիվ պետությունը մեր արդյունաբերությունը պաշտպանում է ոտարյերկյա ապրանքների մրցումից և սրանով նպաստում և նրա գարգացմանը: Այս նույնակես գյուղացուն ամար քիչ նշանակություն չունի: Վարքան արտգ և լավ կը գարգանա մեր պետական արդյունաբերությունը, այնքան ել գյուղացիության համար եժան կը լինեն և գյուղացին ավելի լիովին կը կարողանա բավարարել իր կարիքները: Արդյունաբերության աճումը նշանակում է պրոլետարիատի աճումը, նրա գնողական ընդունակության ավելացումը, վոր գյուղատնտեսական մթերքների համար վաճառման շուկան ընդարձակում է:

Յեզ վերջապես ներքին առևտրի մենավաճառության շնորհիվ մեր պետությունը հասավ նրան, վոր մեր արտա-

հանուլթյունը գերակշռում է ներմուծմանը: Իսկ ոա նըշանակում է, վոր մեր վոսկին վոչ միայն արտասահման մի արտահմանվում, այլ ընդհակառակը այնտեղից մենք ստանում ենք հաստատուն և վոսկի վայրուտա: Սա ոգնութ է մեզ կրատել տուրքերը, ոահմանել հաստատուն փողեր և առողջացնել ամբողջ ժողովրդական տնտեսությունը, խորհրդային ֆինանսները, վոր ի հարկե, առաջին հերթին ոգուտ ե բերում գյուղական տնտեսությանը:

## ՀԼԿՅԵՄ ԲՈԼԱՐ ԳԱՎԿՈՄՆԵՐԻՆ ՅԵՎ ԳԱՎՔԱՂԼՈՒՍՎԱՐՆԵՐԻՆ

Կուսակցության 13 րդ համագումարը գյուղում տարվելիք կուլտուր-կրթական աշխատանքների կենտրոնը սահմանեց խրճիթ-ընթերցարանը: Համաձայն այս վորոշման ամբողջ լուսավորական աշխատանքը, վորը տարվում է գյուղում զանազան կաղմակերպությունների կողմից պետք և կենտրոնացմի խրճիթ-ընթերցարանի շուրջը և տարբի վերջինիս զեկավարությամբ: Մեր բջիջների աշխատանքների մեջ աշխատանքը խրճիթ-ընթերցարանում արգեն խոշոր տեղ է գրավում: այժմ այդ աշխատանքները պետք է ավելի հս ուժեղացվեն: Ամբողջ այն աշխատանքը, վորը տանում է մեր բջիջը անկրուակցական լերիտարդության յեվ հասակավոր գյուղացիության մեջ պետք է տարբի խրճիթ-ընթերցարանների միջոցով:

Անա յելնելով սրանից, կենտրոնական կոմիտեն և բազուազիլիսվարը անհրաժեշտ են համարում տալ հետեւյալ ցուցմունքները:

1. Ամեն մի գյուղական ՀԼԿՅԵՄ բջիջ պետք է ամենավագ աջակցի կոմբջիջն և խրճիթ-ընթերցարանի վարչությանը զեկավարելու խրճիթ-ընթերցարանների աշխատանքները: Այս գյուղերում, ուր կոմբջիջներ չկան, խրճիթ-ընթերցարանների ամբողջ աշխատանքները տառում են ԼԿՅԵՄ բջիջները խրճիթ-ընթերցարանների վար-

չության հետ միասին ըրջուսհրահանգչի և քաղլուսվարդ ըրջհրահանգչի ղեկավարությամբ:

2. Ծրջանային որինակելի խրճիթ-ընթերցարանների վարչության մեջ (վորը բաղկացած է 7 հոգուց և միաժամանակ հանգիստանալու յի ըրջանային կենտրոնական քաղլուսվարչություն, այսինքն ղեկավարում ե ամբողջ ըրջանի քաղլուսաշխատանքը) հանրաժեշտ է մացնել կենաց ըրջհրահանգչին և մի ներկայացուցիչ տեղական կենաց ըջիչից:

3. Շաբաթին խրճիթ-ընթերցարանների վարչությունը բաղկացած է հինգ (5) հոգուց, վորտեղ անպայման մտնում և տեղի կոմյերիտմիության բջիջի ներկայացուցիչը:

4. Գավառական վարչությունները պետք ե մեծ ուշազրություն հատկացնեն կենաց գյուղքիներին և ամեն կերպ սպազործեն խրճիթ-ընթերցարաններում տարվելիք աշխատանքների համար՝ կենաց գավառական կենաց ղեկավարելով այդ աշխատանքները և տալով ցուցմունքներ։

5. Շատ տեղերում նկատվող կոմյերիտմիության բջիջների ձգտումը, դարձնել խրճիթ-ընթերցարանները յերիտակումբներ, վորոնք ծառայեն միայն յերիտասարդությանը, միանդամայն սխալ և պետք ե այդ արմատից վերացնել։ Խրճիթ-ընթերցարանների հիմնական և զվարար նպատակն է սպասարկել նաև հաստակավոր գյուղացիությանը և բավարարել նրա պահանջները։

6. Անհրաժեշտ է, վորպեսզի մեր բջիջները ամեն կերպ աջակցեն խրճիթ-ընթերցարանների վարչիներին նրանց աշխատանքներում (բարձր ընթերցումներ, պատիլքագիր և այլն), Խրճիթ-ընթերցարանների աշխատանքների ուժեղացման գործում նույնպես կենաց բջիջները պետք ե ամեն կերպ աջակցեն խրճիթ-ընթերցարանի վարչությանը։

7. Գյուղատնտեսական և բնագիտական խմբակների ամբողջ աշխատանքները պետք ե տարվեն խրճիթ-ընթերցարաններում, այդ խմբակների կազմակերպումը մըտնում է մեր ձմեռվա աշխատանքների մեջ՝ գրավելով այդ աշխատանքներին մեծ չափով անկուսակցականների։

8. Խրճիթ-ընթերցարանի աշխատանքների մեջ հիմնական տեղ ե գրավելով նայել տեղեկատու աշխատանքը, վորը կտգաւակերպելու և կանոնավորելու համար անհրաժեշտ է կոմյերիտմիության բջիջների ամենալայն աջակցությունը։

9. Հենացեմ կենտրոնական կոմիտեն և Քաղլուսղիւվարը առաջարկում են բոլոր համապատասխան կազմակերպություններին ամենալայն աջակցություն ցույց տալ խրճիթ-ընթերցարանի վարիչներին, ըստ հնարավորության աշխատելով առաջ բաշել ամենուրեք այդ աշխատանքներին կոմյերիտմիության անդամներին։

Հենացեմ կենակոմի Ազիտբաժնի վարիչ  
(Ինցիլյան)

Քաղլուսղիւվարի նախագահ  
(Քացարյան)



# ԲՈՎԱԴԱԿԱՆԻԹՅՈՒՆ

## ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

	Ցիրու
Քաղլուսպլիվարի թեղիներ Ծ-կկ. 13-րդ համագումարին	3
Խրճիթ-ընթերցարան և կարմիր անկյուններ	9
Միասնական քաղլուսիմնարկ	10
Շրջաբերական № 42	14

## ՔԱՂԼՈՒՍԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈՒՆԵՐԸ

Քաղլուսաշխատանքի մի քանի մեթոդներ	16
Բանչպիս կազմակերպել տեղեկտուաշխատանքը	23
Թերթի ընթերցումը խրճիթ-ընթերցարանում	34

## Ի՞ՆՉ ԱՆԵԼ

Խրճիթ-ընթերցարանի որացույց	40
Ջմեռային աշխատանքի նախագիծ	44
Ի՞նչ պետք է անի սանիտար հանձնաժողովը մալարիայի դիմ պայքարելիս	46
Բանվորական ակումբը և բանթղթակցի անելիքը	47
Պատի լրաւրի սխեմա	53
Բողոքի և հարցման արկղներ	59

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՆ

III-րդ կոմինտերնի 5-րդ կոնգրեսը	61
III-րդ կոմինտերնի մասին համաօստ տեղեկությունն	72
Ի՞նչ և արտաքին առևտրի պետական մենավաճառը և ինչպիսի նշանակություն ունի գագուղացիության համար	76

## ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Քողով Գավաղլուսվարներին և ՀՀԿՅԵՄ. Գավկոմներին	79
Քովանդակություն	

## Ա Բ Խ Պ Ա Կ

Ցիրու 16.—«Քաղլուսաշխատանքի մի քանի մեթոդները վերնագրից առաջ պետք է լինի մեծ վերնագրի՝ «Քաղլուսաշխատանքի մերուները»,

Ցիրու 40.—«Խրճիթ-ընթերցարանի մի շաբաթվաց որացույց» վերնագրից առաջ պետք է լինի մեծ վերնագրի՝ «ԱՅ անել»

Ցիրու 72.—«Ի՞նչ և կոմմունիստական ինտերնացիոնալը» վերնագրից առաջ պետք է լինի մեծ վերնագրի՝ «III Կոմ. Ինտերնացիոնալի մասին համառոտ տեղեկություն»:

Ցիրու 79.—«ՀՀԿՅԵՄ բոլոր գավկոմներին և գավկաղլուսվարներին» վերնագրից առաջ պետք է լինի մեծ վերնագրի՝ «Տրաքերական»:



# ՔԱՂԱՔԻՄԳԼԵՎ ԱՐԻ ՀՐԱՏԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- սպառված
1. Մալարիա—(4 եջ)
  2. Ինչ հիվանդություն և տրախուման  
և ինչպես կովել նրա գեմ (4 եջ) »
  3. Գինու տակառի հիվանդությունը և  
նրա բժշկությունը (4 եջ) »
  4. Բերնի խոռոչը և նրա առողջապահությունը  
(4 եջ) »
  5. Գալքաղուսվարների I համազումարը (27 եջ) »
  6. Յեկուտենկո.—Գրադանագիտության  
այրենարան (42 եջ) »
  7. Գրագետ. — Այրենարան մեծահասակների  
համար II հրատարակ. 20 կոպ.
  8. Ս. Ժիատանք.—Ընթերցարան կիսագրա-  
գեաների համար 60 կոպ.
  9. Ակումբային ուղղեցույց (82 եջ)
  10. Քաղլուսվարիչների առաջին կոնֆերանսի  
վորոշումները (27 եջ) »

## ԱԳԻՑ ՊԻՅԵՍԱՆԵՐ

- 11 Յե. Ռայնիս Վոլկով .—(25 եջ) 1 գործ. 10 կոպ.  
սպառված

12. Ռեյսեր.—Համաշխարհային  
բորսա (18 եջ) 1 գործ. 10 կոպ. սպառված
13. » — Յերեք Քրիստոս 1 գործ.  
(18 եջ) 10 » սպառված
14. Զալայա.—Կատյա Զուդովա 3 գործ.  
(32 եջ) 25 »
15. Կրաուլե.—Նորից մարտիկների  
շարքերում 2 գործ. (24 եջ) 15
16. » — Գոյության կովում 1 գործ.  
(24 եջ.) « 15
17. Գ. մահարի.—3 աղիտ ոպերետ 3 գործ.  
(54 եջ.) 30 կոպ.
18. Ա., Վարդանյան.—Տղիտության զոհիր 3 գործ.  
(68 եջ) 70 կոպ.
19. Խոճ.— ընթերցարանի որամտոյան
20. Խրճիթ ընթերցարանի ժողովածու (81 եջ.) 30 կոպ.



NL0231990

Տպագրվում է գրագարանի ուսմասյան

52. 727



ԳԻՆՆ Ե 30 ԿՈՊ.

257